

15385

1922

352(47928)

6-81

Յ Ե Ր Ե Վ Ա Ն Ի

(275)

ԳԱՎԱՌԱ-ՔԱՂԱՔԱՅԻՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

Տ Ա Ս Ա Մ Ս Յ Ա

(1922 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՍՉԵՎ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ը 1922 թ.)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԶԵԿՈՒՅՑԸ

352(47.925)
Ե-81

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
Պ Կ Մ Ն Ե Ն Ե Տ Պ Մ Բ Ն
1922

2010

352 (47925)

5-81

370

2045-24



Յ Ե Ր Ե Վ Ա Ն Ի

ԳԱՎԱՌԱ-ՔԱՂԱՔԱՅԻՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

Տ Ա Ս Ա Մ Ս Յ Ա

(1922 թ. Հոկտեմբերի 1-ից Մինչև Դեկտեմբերի 1-ը 1922 թ.)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԶՆԿՈՒՅՑԸ

1004
15345

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հառաջարան
2. Ընդհանուր տեսություն
3. Վարչական բաժին
4. Հուսափորության բաժին
5. Կոմունալ տնտեսության բաժին
6. Գավառային հողային կոլեգիա
7. Հողային բաժին
8. Առողջապահական բաժին
9. Սոցալբաժին յեվ Սովկոմ
10. Հաշվե-Փինանսական բաժին
11. Գավառային յեվ միւս բաժինները
12. Հավելվածներ, տախտակներ յեվ այլն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Պ Ե Մ Ե Ն Ի Տ Ա Վ Ր Ա Ն

1922

7309

45-2409

2001

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Համաձայն Հ. Ս. Խ. Լ. Սահմանադրութեան 67-րդ հոդվածի պատգամա-
փորներն ու խորհրդային ներկայացուցչական մարմինները պարտականու-
թյուն ունեն տալ պարբերական զեկուցումներ իրենց ընտրողներին:

Այդ սկզբունքը մինչ այժմ գործադրվել է բանավոր, դիպվածաբար յեւ
չի կրել շոշափելի, մնայուն բնույթ:

Գործկոմս ներկայիս տալիս է առաջին տպագիր ու անփոփ հաշվեդե-
կույցը իր տասամսեա գործնութեան:

Մեր այս նախաձեռնութեանը նպատակ ունի—

ա. Հաղորդակից անել, Բանվորա-Վրդացիական գիտակից տարրերին յեւ
քաղաքական շահագուգիւ շրջաններին մայրաքաղաքի յեւ իր գավառի Գոր-
ծադիր Իշխանութեան կառավարական ու սոցիալական շինարար աշխատա-
նքներին:

բ. Ամփոփ ու փաստական տվյալներ ներկայացնելով հնարավորութեան
ստեղծել, պատգամափորական խորհրդներին յեւ խորհրդների համագումար-
ներին իրապես կիրարկելու սահմանադրութեան նրանց վերապահյալ վերա-
հսկողութեան իրավունքը:

գ. Իրագեկ դարձնել պետական-հասարակական հիմնարկներին յեւ հատկա-
պես այլ Գործկոմներին մեր կատարած աշխատանքի փորձառութեան, գոր-
ծնութեան մեթոդների հետ, վորովհետեւ այդ փոխադարձ ծանոթութեամբ
ու համագործակցութեամբ է մշակվելու սոցիալ-քաղաքական շինարարութեան
ընդհանուր, լավագույն ձեւերն ու տիպականութիւնը:

դ. Նախապատրաստել կարեւորագույն նյութերը խորհրդային Հայաստա-
նի պետական-սոցիալական կյանքի ու շինարարութեան ապագա ուսումնա-
սիրութեան:

ե. Առիթ ներկայացնել կատարված աշխատանքի ամբողջացման, հավա-
քական ինքնագիտակցութեան, կազմակերպչական ամփոփման յեւ գործնու-
թեան հաջորդականութեան յեւ այլն, յեւ այլն:

Խորհրդային պետականութեանը արդյունք չէ իրավունքի տեսարանների
գիտական հնարագիտութեան, բնագանցական կառուցվածքների:

Խորհրդային բովանդակ հանրակարգը ծնունդ ու նվաճումն է բանվորա-

գյուղացիական աշխատավորութեան տարեբերի իջնագործներութեան, մասնա-
յական ստեղծագործութեան:

Սխալվելով, սայթաքելով, ընկնելով ու բարձրանալով, շեղումներով ու
նահանջներով ե, վոր Հայաստանի աշխատավորը սաղմնավորում, ձեւա-
վորում ու կազմակերպում ե Խորհրդային իրավակարգը:

Մեր անդրանիկ գրավոր հաշվեգեկույցն յեվս արդյունք չե հնուց ժա-
ռանգութիւն մնացած ծրագրերի ու նախատիպարների:

Զուրկ նախնական հիմնավոր ընդհանրացումներից, հաճախ նաեւ փաստա-
կան կարեւոր տվյալներից, անվարժ նման աշխատանքի, կազմած հապճեպից
—մեր այս հաշվեգեկույցը, անխուսափելիորեն, թերի ե լինելու, վոր պարզ
գիտակցում ու զգում ե ամենից առաջ յեւ ամենից ավելի Գործկումս:

ՅԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԱՌԱ-ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Յ ե ը ե վ ա ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ դժվարին պայմաններում ե աշխատել Յերեւանի Դավառա-քաղաքային
Գործադիր Կոմիտեն, պայմաններ, վորոնք անխուսափելիորեն անդադառնալու են նրա
գործնեութեան արդյունավետութեան յեւ կանոնավորութեան վրա:

Անկախ ընդհանուր, համապետական դժվարություններից, Յերեւանի յեւ իր գաւա-
ռի դրութեան առանձնատկութիւնները ավելի յեւս ծանր վիճակ եին ստեղծել, վոր
մեղմացած չափով, քայց յեւ զգացվում ե նայել ներկայումս:

Ինչ եր ներկայացնում այն ժառանգութիւնը, վոր քաժին եր ընկել Հայաստանի
Խորհրդային Իշխանութեանը:

Տնտեսապէս քայքայված դեռ իմպերիալիստական պատերազմի շրջանում, առ ու
ավերի վերածված տաճկական արշավների որերից, արյունաքամ դարձած ազգամիջյան
ու քաղաքացիական կռիւներում կուտուրապէս ու տնտեսապէս առանց այն ել հետամ-
նաց Հայաստանը սոցիալապէս դիակնացել եր:

Վորքերի, գաղթականների ու սովամահների ձեւագործի գանգված. տարիների սին
պատրանքներից ու ճիգերից հուսահատ, պաշտամունքի առարկա հանդիսացող ավանդա-
կան երազանքների հորիզոններից հիստիալիստական—ահա թե ինչ արժեքի քարոյական
կերպարանք ունեւ Հայաստանի ժողովուրդը:

Ինչ անել:

Յերաշխարհել հանրապետութեան միջազգային—քաղաքական դրութիւնը, ապահո-
վել խաղաղ իրավակարգի ներքին հնարավորութիւնները, ազատել աշխատավորական
լայն գանգվածները սովամահութեան ճիրաններից, խարսխել տնտեսական վերաշինու-
թեան տարրական հնարավորութիւններ, ստեղծել կուտուրական կյանքի նվազագոյն
տվյալները, կուտակել աշխատավորութեան սոցիալական-նոգեկան ունակութիւնների կա-
պիտալը—ահա թե ինչ հիմնական խնդիրներ արաջադրեց իրեն Խորհրդային Իշխանու-
թիւնը Հայաստանում:

Բայց ի՞նչ ձեւով ու ինչ ճանապարհով:

Հենվել նախկին իրավակարգի, հին պետական կառավարական սխառեմի վրա—նոր
իշխանութիւնը չեւ կարող յերբեր:

Արտահայտութիւն յեւ արտահայտիչ պրոլետարիատի դիկտատուրայի, կրողը ու ներ-
կայացուցիչը պատմական սոցիալական նոր ուժերի ու գաղափարախոսութեան, Հայաս-
տանի քանկորա-գյուղացիական իշխանութիւնը պետք ե սաղմնավորեր, ձեւավորեր ու
կազմակերպեր դասակարգային ինդուստրիական նոր պետականութիւն—Խորհրդային իրա-
վակարգ:

«Բանվոր դասակարգը իշխանութեան համեմտ չի կարող իր նպատակների համար
ոգտագործել հին պետական մեքենան» ասում եր Փրիդրիխ Ենգելսը:

Ահա այս պատմական քաղաքագիտական ճշմարտութեան գիտակցութեամբ համակ-

ված—Խորհրդային իշխանությունը նախաձեռնեց ամեն ինչ ի նորս, առանց ունենալու տարրական կազմակերպչական տվյալներ ու սոցիալ-քաղաքացիական ավանդներ:

Միակ միջազգային-քաղաքական ուղեցույցը, դա Ռուսաստանի Խորհրդային իշխանության փորձառությունն ու ոճանդակությունն էր:

Սակայն այդ փորձառության դասերն ու պատգամները կիրառվելու եր մի յերկրում, վոր գերազանցապես մանր, աշխատավոր գյուղացիական դեմոկրատիայի յերկիր, գուրկ արդյունաբերական կենտրոններից յեվ բանվորական դասակարգային կոտ կազմակերպություններից:

Չկային յեվ չեյին կարող ել լինել ձեռնարկ փորձառու աշխատավորներ. նոր եր աշխատանքի եռվությունն ու ձեվերն, նոր եյին յեվ աշխատավորները:

Գոյություն ունեցող յեվ մինչ այդ գործող հասարակական ույժերն ու մտավորակությունը անձեռնմխ եր կերտել նոր իրավակարգը, նա դեռ չեր հարազատացած Խորհրդային իրավակարգին, նրան ամեն ինչ թվում եր ոտարոտի, անբմբռնելի...

Պետական սոցիալական կյանքի առաքելայական պայմաններն յեվս բացառիկ, արտակարգ եյին. համարյա բոլոր ինտիկներն կրում եյին հարվածային ընույթ, մի դրություն, վոր անկարելի եր դարձնում աշխատանքների համաշխարհային յեվ գործնետության հաջորդականությունն ու ներդաշնակությունը:

Յեվ Խորհրդային իշխանությունը հեղափոխական վճռականությամբ ձեռնամուխ լինելով Հայաստանի յեվ իր բանվոր-գյուղացիական ժողովրդի քաղաքական-սոցիալական կացության ձեվափոխման ու բարեկարգման տոկուն ու համատ աշխատանքով, քաղաքացիական պայքարի բովից անցնելով—կարող հանդիսացավ ստեղծել քաղաքական իրավական կայուն հավասարակշռություն, վոր անհրաժեշտ նախապայմաններիցն եր սոցիալ տնտեսական շինարարության:

Քաղաքական այս կայուն հավասարակշռությունը նախադրություն ընձեռեց Խորհրդային իշխանության նշանակովի հեղափոխական կոմիտեներն ներքեվից մինչ հանրապետության գերագույն իշխանությունը փոխարինել ընտրովի պատգամավորական խորհուրդներով յեվ նրանց գործադիր կոմիտեներով:

1921 թվի տարեվերջին յեվ 1922 թվի տարեմուտին կատարվեցին այդ ընտրությունները, վորից հետո վոչ միայն սոցիալական զաղափարախոսության ու պատմական կոչմամբ, այլ յեվ կազմակերպչական սխտեմով իշխանությունը դարձավ Խորհրդային:

1922 թվի նոյեմբարի 29-ին Յերեվանի պատգամավորական Խորհուրդների զավառ-քաղաքային համագումարում ընտրվեց նաեվ Յերեվանի Գավառ-քաղաքային Գործադիր Կոմիտեն, վորը համաձայն Հ. Ս. Խ. Հ. սահմանադրության 49-րդ հոդվածի պատգամավորական Խորհուրդների զավառային մի համագումարից մինչ մյուսը հանդիսանում ե զավառի բարձր իշխանությունը:

Գործադիր Կոմիտես իր ձեռքը վերցնելով զավառի բարձր իշխանությունը, կարիք չունեի ընդհատել նախկին Հեղափոխական Կոմիտեի գործնետության ընթացքը, բնդակառակը, մենք շարունակեցինք այդ աշխատանքը, հարկ յեղած դեպքում յեվ հատկապես առաջին շրջանում, ձեվափոխելով կազմակերպչական սխտեմները:

Համապետական թե տեղական նորանոր կարիքները ընթացիկ գործնետության ժամանակ վորոշում եյին մեր աշխատանքների բովանդակությունը յեվ ուղղությունը:

Իսկ թե 1922 թ. նոյեմբարի 1-ից յեվ ավելի ճիշտ փետրվարի 1-ից մինչ նոյեմբերի 1-ը ինչ աշխատանք ե թափել Գործադիր Կոմիտես—դա արդեն կազմում ե մեր աշխատանքի բովանդակությունը:

Մեր այդ ժամանակեա գործունեությունը գնահատելու տեսակետից կարելի ե հաշվի առնել նայեվ հետեվյալ անցողակի թե մնացուն պարագաները:

ա. 1922 թվի նոյեմբարին Գավառ-քաղաքային Հեղափոխական Կոմիտեն անըողովին կլանված եր պատգամավորական խորհուրդների յեվ նրանց համագումարների ընտրությունը: Իսկ նույն ամսվա վերջերին ընտրված Գործադիր Կոմիտեն անհրաժեշտաբար մտահոգված եր ինչ կազմակերպչական կարելի վերափոխություններով համաձայն Խորհրդային կառավարական նոր սխտեմի: Այնպես վոր զգալի ժամանակ անմիջական որդանական աշխատանքի ընթացքը տուժում եր:

բ. Հաշվենթարի այս ժամանակաընթացքում հատկապես ծավալվեց Ֆինանսական նոր քաղաքականությունը, պետական նպաստավորումի տեղական միջոցների փոխանցումը, Ֆինանսա-տնտեսական ինքնարդարացման սկզբունքը յեվ այլն. իսկ այս ամենը, ի հարկե, վորոշ թուլւթներ ընդհատում ու աններդաշնակցություն եր մոցնելու Գործադիր Կոմիտեի գործնետության ընթացքում:

գ. Համապետական թե տեղական հարվածային արտակարգ աշխատանքների պատճառով պատասխանատու աշխատակիցները, նույնիսկ նախագահության անդամները ստիպված յեղան թողնել իրենց ընթացիկ աշխատանքները ու անմիջական գործերը:

Պարզ ե, վոր պատասխանատու աշխատակիցների մշտական անկայուն դրությունը, Գործադիր Կոմիտեի անձնական կազմի հաճախակի փոփոխությունները արգելք յեն հանդիսանում կատարվող աշխատանքների հաջորդականության կապը պահել:

դ. Յերեվանը, լինելով վոչ միայն համանուն զավառի կենտրոն, այլև հանրապետության մայրաքաղաքը-Գործադիր Կոմիտես ստիպված եր իր աշխատանքի ու յեռանդի շատ զգալի մասը նվիրել Կենտրոնական իշխանության բազմաթիվ, պես-պես ու հրամայական պայանջներին:

ե. Պետական, կուսակցական յեվ պրոֆեսյոնալ Կենտրոնական մարմինների համակցությունը-անխուսափելիորեն առիթ եր ստեղծվելու յեվ, իսկապես ստեղծվում ել ե, մշտական դիմումների, պահանջների միջնորդությունների յեվ այլն. իսկ իրերի այս դրությունը նսեմացնում եր Գործադիր Կոմիտեի բաբոյական հեղինակությունը, թուլացնում նրա ինքնուրույն գործնետությունը յեվ խանգարում աշխատանքի խաղաղ ու ընտան ընթացքը:

զ. Համապետական կարիքները յեվ Յերեվանը իր խայտաբղետ ու աններդաշնակ սոցիալական կառուցվածքով, վորոշ չափով թուլացնում յեն մեր զավառական Գործնետությունը յեվ այլն...

Աշխարհագրական դիրքի, վարչական կառուցվածքի յեվ ազգաբնակչության յեվ կապի տեսակետից Յերեվանի զավառը հետեվյալ պատկերն ունի.

Գավառի յերկարությունը միջին թվով 128 վերստ ե, իսկ լայնությունը 40 վերստ:

Հիսիսային կողմից զավառի սահմանն ե Նոր-Բայրազետի, Յելենովկայի զավառամասը, արեվելյան կողմից Դարալագյազը յեվ Նախիջեվանի շրջանը, արեվմտյան կողմից-Եջմիածնի, Ալեք-Պոլի յեվ Ղարաբախի զավառները, իսկ հարավ-արեվմտյան կողմից Մուրմալուի զավառը յեվ Պարկաստանը:

Դյուղերի ընդհանուր թիվը 225 ե. իսկ ազգաբնակչությունը հաշված վերջերս յեկած զաղթականությունը յեվս, կարելի ե հաշվել 100.900 շունչ:

կան վաշտ, 4. 3-րդ Պահակային վաշտ, յեւ 5. Գլխի, վորոնց նա ոգնել ե իր նյութա-
կան միջոցներէջ շատ համեմատ չափով:

Հողային հարցերում, քննութեան ե առնվել յեւ համանութեան պետէ Հողբաժնի,
Հողկուլեզիայի, Վարչական բաժնի մի շարք կարեւոր ծրագրեր. որինակ միլիցիայի
կազմակերպման, հողաշինարարական յեւ այլն:

ԳՈՐԾԿՈՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՍՏԵՐԸ

Բացի այս, Գործկոմը ունեցել ե 8 ընդհանուր նիստ, իր անդամների մեծամասնու-
թեամբ: Ա. նիստում կայացել ե նախագահութեան ընտրութեանները ինչպես յեւ բյու-
ղջեզային, քաղաքի բարեշինութեան յեւ առողջացման հանձնաժողովներ: 10 ամսվա
ընթացքում նախագահութեան կազմի մեջ յեղել ե հետեւյալ փոփոխութեանները. փո-
խվել ե յերկու նախագահ յեւ մի ժամանակվոր նախագահ ինչպես յեւ յերկու քարտու-
ղար: Մնացյալ նիստերում պարբերաբար թե նախագահութեան յեւ թե բաժինները
տվել են իրենց գործնութեան զեկուցումները: Մտկայն ընդհանուր առմամբ պետք ե
տեսել, վոր նիստերը յեղել յեն անկանոն յեւ անդամներից մեծ մասը բացակայել ե:

ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Հաշվենթարկ ժամանակամիջոցում նախագահութեանը ունեցել ե 52 նիստ, վորտեղ
քննութեան յեն առնվել ընդամենը 547 հարցեր, իսկ նախագահութեան նիստերին
զուգընթացաբար կայացել յեն Սերմկոմի նիստերը թվով 23: Այդ հարցերն իրենց
բնույթով ու բովանդակութեամբ բաժանվում յեն հետեւյալ ձեւով.—

Կազմակերպչական հարցեր.— մշակված ու հաստատված յեն Գործկոմի բաժինների
ներքին կանոնադրութեանները: Մի շարք փոփոխութեաններ Կոմունալ-Տնտեսութեան
վարչական կազմի մեջ, դրանց մեջ գլխավոր տեղն ե բռնում բնակարանային բաժնի
Կոմունալ-Տնտեսութեան Տեխնիկական յեւ թարածին հանձնվելը, վորն առաջ ամբո-
ղջապես կապված եր նախագահութեան:

Կոմունալ-Տնտեսութեան հարցեր.— Բնակարանային քաղաքականութեանը վարելու
համար մշակված յեւ հրատարակված յեն մի շարք վորոշումներ ու հրամաններ. հաստա-
տվել ու հայտարարվել են մոնիցիդալիզացիայի յենթարկված տների ցուցակները: Հար-
կային քաղաքականութեան մեջ պարտադիր վորոշումներով հայտարարվել են փոխա-
դրական միջոցներից, բեռներից յեւ առեւտրա-արդյունաբերական ձեռնարկութեան-
ներից զանձվելիք տուրքերի նորման, նույնը յեւ կոշիկ սրբողներից. հաստատվել ե Կոմ-
ունալ Տնտեսութեան կնքած պայմանագրերը քաղաքային կշեռքը, պավիլիոնը կադա-
ստրով տալու մասին: Մի շարք վորոշումներ ե հրատարակել ջրի տուրքի յեւ նրանից
ոգտվելու կանոնների մասին:

Միաժամանակ նաեւ մի շարք բաղմամբով շինարարական յեւ վերանորոգչական
ծրագրեր, որինակ փողոցների մայթելու, առուների շինութեան, Թոխմախան գետի
վերանորոգութեան, քաղաքից կայարանի խճուղու աշխատանքները յեւ այլն:

Առողջապահական հարցեր.— կայացած ե վորոշում ախտահանական կամերայում ախ-
տահանութեան յենթարկելու համար շուկայում վաճառվող հազուստները. նույնպիսի վո-
րոշում ե կայացված ու հայտարարված հասարակական առողջապահութեան մասին, ինչ-
պես յեւ հիվանդանոցների:

Ֆինանսական.— մի շարք նիստերում քննվել ու հաստատվել ե Գործկոմի բյուջեն
յեւ առանձին բաժինների սմետան:

Սովյալների ոգնութեան գործը.— մշակված ու կյանքի մեջ կիրառված ե մի շարք
միջոցներ-սովի դեմ կռվելու յեւ մեղմելու այն, նույնը նաեւ գաղթականութեան վի-
ճակը բարձրելու համար:

Զորամասերի շփութեան մասին.— վերջին մի քանի ամիսներում Գործկոմին ե
հանձնվել քաղաքում զանվող հինգ զորամասերի շփութեանը-դրանք յեն 1-ին՝ 2-րդ
Հատուկ բաժին Արտադրամանյան, 2. Հեղափոխական Ռուսական, 3. Ծաղաբաղիտա-

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ընդհանրապես վարչական քաժինը յեվ հատկապես Գալաուսական-Բաղաքային գործադիր Կոմիտեների վարչաժինները հանդիսանում յեն վոլնաշարը Խորհրդային Իշխանություն:

Նրանք յեն կազմակերպում յեվ նրանց միջոցով ե կազմակերպվում Խորհրդային պետության ամբողջ ներքին իրավակարգը, անա թե ինչու այնքան շարժուն ու գործուն ե վարչական քաժինը:

Գալաուսական Գործադիր Կոմիտեների վարչական քաժինների իրավասությունն ու գործառնությունները վերամշակված ու ձեվակերպված յեն 1922 թիվ ապրիլի 5-ի կանոնադրությամբ—հաստատված Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից:

Համաձայն այդ կանոնադրության, ինչպես յեվ նրան նախորդած որինադրությունների ու պրակտիկայի, Վարչական քաժինը պարտականություն ունի.

ա. Կազմակերպել տեղական իշխանությունը յեվ ապահովել հեղափոխական կարգապահությունը:

բ. Վերահսկել կենտրոնական յեվ տեղական իշխանությունների ղեկընտնների, վորոշումների ու կարգադրությունների կիրարկմանը:

գ. Վորպես ընդհանրական ներկայացուցիչ կատարողական իշխանության, ոժանդակել ինչպես Խորհրդային կենտրոնական, նույնպես յեվ Գործադիր Կոմիտեի քաժիններին, նրանց գործնեությունը ընթացքում յեվ այլն:

Բացի այս հիմնական գործառնություններից վարչական քաժինի իրավասության ու ղեկավարության ե յենթարկվում նաեվ քաղաքացիական ակտերի գրանցման գործն ու քաժինը:

Իր այս հիմնական ու քազմաթիվ պարտականությունները նպատակահարմար ի կատար ածելու համար վարչական քաժինն յենթակա ու առընթեր կազմակերպված յեն հետեվյալ յենթաքաժինները.

1. Ընդհանուր
2. Տեղեկատու-Հրահանգչական.
3. Միլիցիայի.
4. Քաղաքացիական ակտերի գրանցման:

Վարչական քաժինը իր ներկա հիմնական ձեվակերպում-կազմակերպությունը ստացավ փաստորին Գործադիր Կոմիտեի ընտրությունից, այսինքն հունվարի 23-ից հետո: Իսկ մինչ այդ զավառական Հեղափոխական Կոմիտեի շրջանում նրա գործառնությունները տեսականորեն յեվս պարզ ու վորոշակի չեին տեսակավորված ըստ յենթաքաժինների:

Գալաուս-Բաղաքային Գործադիր Կոմիտեի վերջնական կազմակերպությամբ վերակազմվեցին յեվ արդի իրենց կառուցվածքը ստացան նաեվ վերոհիշյալ յենթաքաժինները, վորոնց իրավասությունը, գործառնությունները յեվ փոխ-հարաբերությունները սվելի պարզվեցին համաձայն ապրիլի 5-ի կանոնադրության:

Առաջին հերթին կարգավորվեց Տեղեկատու-Հրահանգչական յենթաքաժինը, վորը սկզբի շրջանում գործում եր համաձայն Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիտեի Կարգա-կազմակերպչական քաժինի հրահանգի, իսկ հետագայում—ապրիլի 5-ի կանոնադրության:

Համաձայն վերջին կանոնադրության Տեղեկատու-Հրահանգչական յենթաքաժինը ա. Բննարկում ե Խորհրդային տեղական հիմնաքկների գործնեությունը որինակա-նությունը ու նպատակահարմարությունը, ըստ այն վորոշումների ու շրջաբերականների, վոր ստացվում յեն հենց այդ հիմնաքկներից.

բ. Հսկում ե, վորպեսզի Գործադիր Կոմիտեի քաժինները ժամանակին, պարբերա-բար զեկույցներ ներկայացնեն, ինչպես յեվ հաշվետում Գործկոմի. յեվ իր քաժին հիմնաքկների պատասխանատու աշխատակիցներին.

գ. Ազդարարում քոչք որինադրություններն ու վորոշումները, միաժամանակ հրատա-րակելով ու տարածելով Խորհրդային Իշխանության գործնեությունը ժողովրդականացնող—քացատրող գրականություն, թույցիկներ, թերթեր յեվ այլն, ինչպես յեվ կազմակերպում ազիտացիոն-պրոպագանդիստական շրջապայություններ ըստ Գործադիր Կոմիտեի սույա-դրությունների:

դ. Դասավորումն ու մշակումը կենտրոնից յեվ տեղերից ստացված տվյալների յեվ պարբերական ու փոխադարձ ծանոթություն կատարվող աշխատանքի յեվ այլն:

Հաշվեզեկույցի ընդգրկած ժամանակում եր, վոր փաստորեն սկսվեց Տեղեկատու-Հրահանգչական յենթաքաժինի գործունեությունը յեվ այդ ժամանակվա ընթացքում կատարվել ե շոշափելի աշխատանք:

Կազմակերպվել ե պարբերական զեկույցումների պարբերական տեղական հիմնաքկների ու պաշտոնեություն, մատչելի ե դարձվել ու քացատրվել կենտրոնական ու գալաուս-կան իշխանությունների որինադրությունը, վորոշումներն ու կարեվորագոյն նախածոնու-թյունները յեվ ընդհանրապես կենդանի կապ պահպանվել զավառի կենտրոնի յեվ շրջա-նի, տեղերի մեջ, իրագել պահվել ազգաբնակչությունը Խորհրդային Իշխանության գործ-նեության, նրա քրատարակած ղեկընտնների, որենքների յեվ վորոշումների հետ:

Կենդանի կապի պահպանության նկատառումով յենթաքաժինս, քացի գրավոր դիմում-ներից ու շրջաբերական հղումներից, գործողղել ե տեղերը նաեվ հատուկ հրահանգիչներ աշխատանքները տեղերում կազմակերպելու յեվ ամրապնդելու համար, առավել յեվս յերբ դա պահանջել ե վեճակագրության անմիջական վերահսկության կարիքը:

Առավելապես գործոն ե յեղել ու յեռանդ ե ցույց տվել յենթաքաժինս հունիսից, յերբ յենթաքաժինի վարիչը ինքը յեվս յեղել ե տեղերի վրա, կազմակերպել կամ մասնակցել ե գյուղխորհուրդների նախագահների համագումարներին, վորտեղ արժարժվել են թե հարվա-ծային յեվ թե շինարարության ամեն տեսակի հարցեր:

Հունվարից առ մեկն նույնքերի շրջաններն յեն ուղարկվել հրահանգիչներ յեվ յենթա-քաժինի վարիչը 76 անգամ:

Շրջանները կենտրոնի գործնեություն, ծրագրերին ու վորոշումներին տեղյակ կացու-

յաներու համար յենթաբաժինը պարբերաբար զավառամասներն և ուղարկում հասել ժողովրդական Կոմիտայի թորհրդի, իր հախազանովյան յեղ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հախազանովյան հիտտերի որագրերի արձանագրությունների պատճենները յեղ քաղվածքները:

Յենթաբաժինը խտով Իրանագել և յեղ Շրջանային Գործադիր Կոմիտեներին փոխադրաբար ուղարկել իրենց արձանագրությունները յերկուսկան որինակ, վորի մեկ որինակը մնում և Գործադիր Կոմիտեում, իսկ մյուսը իր հերթին ուղարկվում և Ն. Գ. Ժ. Կոմիտեիստ վարչա-կազմակերպչական բաժնին:

Գծախառնար շրջանները հարկը պահանջած արձագանք չեն տվել սկզբնական շրջանում, սակայն վերջին ամիսներում առաքման կարգը որինակել և:

Յենթաբաժնի շնորհիվ ներկայումս կանոնավորված և հասել «Թորհրդային Հայաստանի» ամենուրյա առաքումը, վորով շրջաբովումները ստանում յեն անընդհատ հնարավորություն հետեվել ոչ միայն Թորհրդային Իշխանության որինադրություններին ու պաշտոնական գործնություն, այլ յեղ նրա ընդհանուր սոցիալ—քաղաքական տեսակետներին, իրագրիկ կը մնան այլ Գործկոմների ու Խորհրդային հովհարկների աշխատանքներին, ինչպես յեղ միջազգային քաղաքական իրադարձություններին:

Մինչեղ այժմ յենթաբաժինը տեղերն և ուղարկել շրջաբերականներ, Իրանագներ, հաշվետվության ձեղեր յեղ այլ գրություններ—281, պարբերական թերթեր 15,090:

Դալով ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՆԹԱԲԱԺՆԻՆ քստ ապրիլի 5-ի կանոնադրության հաւ ա. Նախաձեռնում յեղ մշակում և միջոցներ Թորհրդային Կենտրոնական կարգապահության ապահովության:

բ. Ոժանդակում և Թորհրդային Կենտրոնական թե տեղական մարմիններին նրանց փորձումների կերարկելուն:

գ. Հսկում և որինադրությունների յեղ պատշաճ հիմնարկների փորձումների անխախտ կատարման, սահմանելով ի դեպ նրանց խախտման համապատասխան վարչական տույժ պարտադիր վորժումների ու վարչական տույժի համապատասխան սահմաններում:

դ. Հաշվետուումը զավառի Խորհրդային աշխատակիցների յեղ տոմարագրումը գործողվող պաշտոնյաների լիագործների:

Ընդհանուր յենթաբաժինը չի ունեցել իր հատուկ վարիչը յեղ յենթաբաժնի պարտականությունները կատարել և վարչական բաժնի վարիչը:

Չնայած դրան—շոշափելի աշխատանք կատարվել և հասել այս ապարիզում:

Ընդհանուր յենթաբաժինը առաջին հեղին մշակել ու մշակում և հրահանգներ ապահովելու ու ամրապնդելու Խորհրդային—հեղափոխական կարգապահությունը Յերեվանի յեղ իր զավառի սահմաններում:

Այդ Իրահանգներն, պարտադիր վորժումներն ու հրահանգները թվով 106, անմիջապես ուղարկվել են շրջաբերական ձեղով—տեղերը, պարտավորեցնելով Շրջաբովումներին այդ Իրահանգների ու պարտադիր կանոնների անխախտ կատարումը վերահսկել յեղ ի կատար ածել միլիցիայի միջոցով, իսկ խախտման դեպքում—յենթաբաժինը պատշաճ վարչական տույժի:

Ընդհանուր յենթաբաժնին կից գործել և Անձնական կազմի սեղանը. հա պահել և Գործկոմի բոլոր բաժինների աշխատակիցների կոնսուլտոր հաշվետուումը. Գործկոմն ունեցել և հետեվյալ թիվը պաշտոնյաների.

ա. Ընդհանուր գրաս.—վարչ. բաժ. յեղ Ֆինբաժին	37	նոգի.
բ. Լուսբաժին	344	»
գ. Միլիցիա	259	»
դ. Աղբաժին	283	»
ե. 6 զավառամասերում	24	»
զ. Սոցալբաժին	9	»
է. Հողբաժին	12	»
ը. Կոմունալ—տնտեսություն	120	»
		Դումարն և. 1051 նոգի.

Այսպիսով հնարավորություն և ստեղծվել հետեվել ամբողջ պաշտոնեություն թվական ու անձնական կազմի շարժմանը, փոփոխություններին:

Ուսարահպատակների ցուցակագրությունը—համաձայն Արտգործոլորմի մայիս 15-ի վորժման Հ. Ս. Խ. Հ.-ի սահմաններում ապրող բոլոր ուսարահպատակները պիտի ցուցակագրվեն համապատասխան զավառի յեղ քաղաքի վարչաբաժիններում: Ցուցակագրությունը շարունակվել և մինչեղ սոյն հաշվետվության վերջը յեղ ներկայացնում և հետեվյալ պատկերը. ցուցակագրվողների ընդհանուր թիվն և 254, վորից 229 պարսկահպատակ, 19-ը ամերիկահպատակ, 1 բուլղարահպատակ, 1 տաճկահպատակ յեղ 4 անգլիահպատակ:

Տրված վկայականների համար զանձված և տուրք 2.014.878.000 ռ. Հ. Ս. Գ. Չքավորներին տրված և վկայականներ, ինչպես յեղ Թորհրդային յեղ Ամերիկոմի պաշտոնեության, ճրիաբար:

Դատարանական տուրքերից ազատվելու համար վկայականներ և տրված 132 չքավոր անձանց:

Կնիք պատրաստելու թույլտվություն են ստացել վարչաբաժնից 158 հիմնարկներ թե զավառում յեղ թե քաղաքում:

Ձևերը կրելու թույլտվությունը համաձայն Ն. Գ. Ժ. Կ.-ի յեղ Հ. Ս. Խ. Հ. Արտահարգ Հանձնաժողովի վորժման Ոգոստոս աստից անցել և վարչաբաժնին, այդ ժամանակվանից գների թույլտվությունը յեն ստացել 52 նոգի:

Հունվարի մեկից առ մեկն Նոյեմբերի ընդհանուր բաժինը յեղից գրություններ և ունեցել 5915, մոից—6808, շրջաբերականներ և ուղարկել—232:

Դեռ հախ քան աշխատափոխադրահարկի դեկրետի լույս ընծայելը, յենթաբաժինը հաշվետեց փոխադրական պահակության յենթակա փոխադրական միջոցները, քաշելով դրան համապատասխան քստ զավառամասերի, համաձայն նրանց միջոցների քանակի ու կլիմայական սրայմանների:

Տես տախտակ № 2 հետյեղեալ երեսը:

Աշխատափոխադրահարկի դեկրետից հետո այդմի ջոցների քաշելումը կատարվում և համաձայն Աշխատանքի յեղ Ն. Գ. Ժ. Կոմիտարիատների միացյալ հրահանգի:

Բացի ընդհանուր կուլտուր—տնտեսական խոշորագույն արժեքից-կապի ու փոխադրական միջոցների հարցը անհրաժեշտություն և հասել այս յերկու յենթաբաժինների համար:

Այս ապարիզում յեղ Գործկոմը ներկա շրջանում մեծ աշխատանք և թափել վերջացնելով, Հրազդանի, Բաշ-Դեստոնի յեղ Զամարլուի հեռախոսագծերի կապը Յերեվանի յետ, վորը խոշորագույն նշանակություն ունի աշխատանքի արագության տեսակի տեսակից: Տարվում և տեղադրո աշխատանք Ախտայի յեղ Վեդի-Բասարի զավառամասերում այդ կենտրոնները յեղ կապելու Յերեվանին:

№ րան	Գ Ա Վ Ա Ռ Ա Մ Ա Ս	Փ Ո Ւ Յ Ա Դ Ր Ա Կ Ա Ն Մ Ի Ն Ո Յ Ն Ր						
		Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ոկտոբեր
1	Կոտայք	986	2919	46	111	9	351	1
2	Հրազդան	221	402	167	17	1	122	—
3	Ղարաբաղ	502	907	181	31	3	32	2
4	Վեդի Բաղրի	226	766	75	25	—	143	70
5	Ն. Արտա	1537	4071	17	424	4	243	—
6	Բաշ-Պետրոս	159	945	19	34	5	234	—
7	Յերեան քաղաք	183	360	6	222	—	210	—
ԸՆԴԱՄԱՆՔ		3814	10370	511	864	22	1335	73

Վարչական կարգի սահմանափակումը, միաժամանակ յեղ խորհրդային շինարարության մեծ գործը վերջին հաշվով կազմակերպող ու ղեկավարողը տեղերի վրա հանդիսանում չեն գյուղական խորհուրդները: Նրանց գործունեությունից, դեպի իշխանությունը ցույց տված զիտակից վերաբերմունքից շատ քան և կախված — ամբողջ շրջանների տրևտեսությունը բարձրացումի ու բարեկեցությունը:

Ճիշտ է, առաջին հերթին դեկավարողն ու տոն տվողը նանդիսանում է շրջադրվումը, սակայն վերջինի ջանքերն ասպարեյուն կմնան, յեթե տեղերի վրայ, գյուղում գյուղական խորհուրդը ցույց չտա շահագործված յեվ ակտիվ մասնակցություն: Յեվ փորձը ցույց տվեց, վոր այնտեղ ուր գյուղական խորհուրդները գիտակցեցին իրենց դերը — այդպիսի վայրերում պատկերը մխիթարական է յեվ շինարարական: Երկրորդ տեղծել յեն արժեքներ:

Ընդհանուր առմամբ, սկզբնական ամիսներում պիտի լինեին, գյուղատնտեսները իրենց գոյությունը զգացնել չեն տվել, չեն գիտակցել իրենց կյանքի վտանգը մի երկու ամիսները յեկան ապացույցելու, վոր շրջանում գյուղատնտեսները տարված աշխատանքները տվել են իրենց պտուղը - մենք ունենք գիտակից գյուղական խորհուրդներ, վորոնք ինքնուրոյն կերպով գիտեն դնել հարցերը յեվ լուծումը տալ: Թե շինարարական յեվ թե հարվածային ամեն տեսակի խնդիրներ չոչափել են այդ նիստերում:

Այդ հարվածային աշխատանքների եռուն շրջանում, վորոշ տեղեր աբդեն ցույց յեն փակել փայլուն որինսակներ նվիրվածության, զիտակցության յեվ ստեղծած արժեքների: Այլունք յեն այդ աշխատանքները:

Առաջին հերթին հենց պարենտուրքը: Պարենտուրքի զանձման ու հանձման ամիսներում մենք տեսանք նրանց գերագոյն ճանքերը մեկը մյուսին կանխելու իր պարտքի կատարման մեջ: Նոյնը լեով բաշխված սերմացուների զանձման գործում: Հողաշինարարական աշխատանքները, վորոնց մեք հաշվեգեկույցի մեջ հվիրել ենք հատուկ տեղ, այդտեղ յնպիս գյուղխորհուրդները ակտիվ մասնակցություն յեն ցույց տվել:

Անկարող յենք այստեղ լսությամբ անցնել այն արժեքների մասին, վորոնք մենք տեսնում յենք գլուխադրուորդների հերքին շինարարական աշխատանքների ստացարիզում:

Յոյց տանք զաւխտամասերը ստանձին ստանձին. —

Կոտայքում կատարվել յեն մի շարք աչքի ընկնող շենքերի վերանորոգություններ, որանցից զխավորը Նախկին գործկոմի շենքն է, վորն այժմ պատրաստ է: Ապա մի քանի գյուղերում ավերված տների սիստեմատիկ վերաշինություն: Հաստատված է Նոսախոտային կապ Բանաքեռից Յերեվան:

Հրազդանում—առաջին ֆերթին ջրի խնդիրը: Բաղաքից շրջանը խմելու ջուր տանելու
խոշոր նշանակություն ունեցող նաբցը—գյուղացիների մտահոգությունն է կենտրոնն է յեղել
յեվ այդ ուղղությամբ արդեն կատարված և նախապատրաստական դժվարին աշխատան-
քը: Հետո—թե դպրոցական յեվ թե մասնավոր շենքերի նորոգություն—խոշոր չափով:
Առունքի յեվ նանսպարճների մանր-մունք նորոգություններ յեվ ի վերջը՝ ֆեռախոսագիծը:

Համարվում զուի զործոց կարելի է հաշվել Դվին Բյուրդքանդ խնուդին, վորը ահագին տնտեսական նշանակություն պիտի ունենա: Միտ ժամանակներում աշխատանքները կազարտվեն: Մի յերկու շաբաթ առաջ ավարտվեց Համարլու—Յերեվան հեռախոսագիծը:

Բազմյառնվում և շանակալից յեն Տուլի գյուղի ջրանցքը, ուր ջուրը բերված ևստը-
ված և Բենաֆչլու գյուղից: Նոյնպես պիտի մատնանշել Գողթ գյուղի նշանավոր առուն,

վորի աշխատանքները շուտով կավարտվեն: Կատարվել են մի շարք լծե դպրոցական յեվ լծե մասնավոր շենքերի նորոգություններ: Հեռակառավար Յերեվանի նեա կատարված է: Ախտայում նոյնպես ծոռնարկված է Սուլակից—Բարձրանտարա առուի աշխատանքները, վորը տնտեսական խոշոր նշանակություն ունեցող գործ է սակայն դեռ յեվս ավարտված չէ:

Ուժեղ աշխատանքներ յեն տարվում լծե Ախտայում յեվ լծե Վեդիքասարում նեախտագծով կատարվող Յերեվանի նեա:

Ծրագրված յեվ ավագային յեն լծողնված մի շարք շինարարական աշխատանքներ նանապարհների, առուների յեվ այլն բոլոր գամմասերում, յեվ նկատի առնենք անցյալ սեզոնի անվերջ հարվածային աշխատանքները, վորոնք խել յեն գյուղացիություն, նեա-վաքաք յեվ գյուղատնտեսների ժամանակի յեվ յեռանդի մեծագույն տոկոսը—պետք է շինարարական ապագիզում նիշյալ միևնիմում աշխատանքները բավարար նա-մարենք:

Ուրեմն մի վերջին անգամ ասենք վոր գյուղատնտեսները իրենց տեղերի տնտեսա-կանի ու բարոյականի բարձրացման խոշոր ազդակն յեն յեվ պիտի լինեն այսուհետ: Այդ գի-տակցությունը նրանց մեջ մի անգամ ընդմիշտ ամրացնելու յեվ սեփականություն դարձ-նելու համար պետք է ասել, վոր վարչաժինս նվիրել է ուժերի վորոշ տոկոս:

Կատարվել են ավագակային հարձակումներ, յեղել են գողություն, լծանի, կողո-պտաի կաշատակերություն, գեղծումների դեպքեր, բազաբացիների լծե պաշտոնյաների կողմից, բայց յեվ այնպես վաքական բարեկարգության ու կարգապահության ասպարի-զում առաջադիմությունը բարելավումն անյերկրայելի է:

Ամենածանր անհրատտ պայմաններում վարչական բաժնիս հաջողվել է կատարել արդյունավետ մի գործ—ապառվել ներքին իրավարարը յեվ ամրապնդել ու ոժանդա-կել Խորհրդային աշխատավորական շինարարությունը:

(Տես տախտակ № 3) նեայեվեալ երեսը:

ՄԱԼԻՑԻԱՅԻ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ.—Համաձայն սպրիլի 5-ի կանոնադրության ինչպես յեվ նախընթաց կանոնադրի—այս յենթարաժինը—

ա. կազմակերպում է գամապային յեվ բաղաբային միլիցան յեվ դեկավարում նրա բովանդակ գործներությունը, տալով համապատասխան յրամաններ, անելով սրտաշան կարգադրություններ յեվ ընդհանուր գիտավարժություն վարժեցնելով:

բ. Ոժանդակում ու ամրացնում Խորհրդային Հեղափոխական կարգապահությունը, պայքարում քրեական հանցագործության դեմ յեվ առ ի դեպ հարկի սահմանում ու ձեռ-նարկում համապատասխան միջոցներ:

գ. Քննարկում միլիցիայի գործներությունը յեվ ներկայացված բողոքները, տեղափո-խում յրամանատարական—կազմը նախնական համաձայնությամբ վարչական բաժնի վարիչի, սակայն պարբերական հաշվեգեկույց իր յեվ իրեն յենթակա միլիցիայի:

դ. Կազմում նախահաշիվներ, դեկավարում միլիցիայի տնտեսական մասը, վերահս-կում յրամանգամ գամապային բաղաբային միլիցիայի վարչությունը յեվ այլն:

Այս յենթարաժինը, անկասկած, հիմնարարն է վարչական բաժնի ապելին միլի-ցիայի հարցը գերազանցապես ընդհանրական արժեք է ներկայացնում: Նա է, վոր ունի անմիջական շիում բանվորս—գյուղացիական զանգվածների նեա, նա է փաստական ար-տանայելիք գուտ կատարողական իշխանության, նա է յերաշխատվողելու Խորհրդային

Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր № 3
Միլիցիայի յեվ նրան կից քրեական ենթարաժնի գործունեության

Հ Գ Ն Ո Շ	3	1	4
միտո՝ վճարվող և ու վճարվող և ու միտո՝	5,273,233,000	5,273,233,000	5,273,233,000
միտո՝ - միտո՝ և ու - մի միտո՝ և ու	378	378	378
վճարվող և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	108	108	108
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	528	528	528
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	17	17	17
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	51	51	51
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	120	120	120
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	3	3	3
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	870	870	870
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	51	51	51
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	12	12	12
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	18	18	18
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	4	2	6
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	5	4	9
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	2	2	4
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	5	7	12
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	47	28	75
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	95	52	147
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	...	...	...
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	...	...	...
միտո՝ և ու - միտո՝ և ու - միտո՝ և ու	...	...	...

իրավահարգը, ապահովվելու աշխատավորի խաղաղ սոցիալական շինարարությունը, ոժանդակելու Խորհրդային հիմնարկներին յեւ պլն:

Թեյեւ այս կարեւորագոյն յենթաբաժինը հաշվենթաբաժնի ժամանակում չեւ կազմված լեւ նրա գործառնությունները վերապահված եյին զավատա—քաղաքային միլիցիայի պե-տին, քայց յեւ պնպես կարեւոր աշխատանք ղեկավարությունը վարչական բաժնի վա-րիչի—կատարվել ե յեռանդուն կերպով:

Միլիցիայի բարդ ու պատասխանատու աշխատանքների բարեխիղճ կատարման հա-մար ամհրաժեշտ ե վորպեսզի—

ա. միլիցան ազատագրվի արատավոր ու կասկածելի տարրերից.

բ. ունենա քաղաքական ու քաղաքացիական միջին դաստիարակություն

գ. ղեկավարվի կարող հրամանատարական կազմով.

դ. լինի ապահովված նյութական յեւ վարչա—տնտեսական փոխադրական տե-սակետից:

Իսկ մեր գործնությունն այս շրջանում ամեն ուղղությամբ ել թափված ե եղել մեծ յեռանդ յեւ ձեռնարկված կարեւոր միջոցներ:

Միլիցիայի նախնական կազմակերպության շնորհիւ նրա շարքերը մտել եյին բազ-մաթիւ կասկածելի քրեական տիպեր, անցյալից մհացաց տականքներ, շատ հաճախ կուլակներ, վորոնք միլիցիայի ծառայությունը խուսափել եյին զինվորական պարտակա-նություններից յեւ պլն:

Վարչական բաժինը միլիցիայի շարքերի բյուրեղացմանը ձեռնարկել եր դեռ ա. թ. հունվարից յեւ շատ առաջ համապետական ծավալով կատարվող միլիցիայի գտումից: Այդ մեր նախաձեռնությամբ կատարված գտումի շնորհիւ պաշտոնագրկվեցին զավատա-կան միլիցիայից 45 հոգի, իսկ քաղաքային միլիցիայից 25 հոգի:

Առաջին հերթին հեռացվում են քրեական յեւ հակահեղափոխական յեւ ապա նաեւ շարքային ծառայության անվարժ ու անկարող յեւ ընդհանրապես անձեռնհաս տարրերը:

Հատուկ ուշադրություն ե դարձված նաեւ միլիցիայի զբաղիտական կրթության յեւ քաղաքական ու քաղաքացիական դաստիարակության վրա: Քաղաքային միլիցիայի շար-քերից անզբաղիտությամբ հետքերը միանգամայն կորչել են իսկ զավատի միլիցիայի անզբաղիտությունը վերացնելու հնարավորությունը չստեղծվեծ մի շարք տեխնիկական անհարմարությունների պատճառով. այն ե շտատները շատ նվազ են յեւ միլիցիոներ-ները ազատ վարկյան նույնիսկ, չեն ունեցել, այլ միշտ յեղել են իրենց հրատապ պար-տականությունների կտտարման գործում: Բացի այդ միլիցիայի վարչության կից բացվել ե ազիտ-սրահ, գրադարան-ընթերցարան, վորտեղ տեղական ույժերի միջոցով կատար-վում են դասախոսություններ միլիցիայի պարտականությունների մասին, Խորհրդային իրավահարգի, ընթացիք սոցիալ-քաղաքական հարցերի շուրջ յեւ պլն:

Այս աշխատանքների շնորհիւ միլիցիայի բարոյա-կրթական, քաղաքական մակար-դակը զգալիորեն բարձրացել ե քաղաքական ինքնազիտակցությունը աճել, վերաբեր-մունքը դեպի քաղաքացիները փափկանկատիչ, ղեցիպլինան ուժեղացել յեւ պլն: Վե-րոհիշյալ փոփոխության հմուտ—արտահայտություններից ե յեւ այն բազմաթիւ դեպքերը, յերբ միլիցիոներները իրենց առաջարկված կաշառք թանգարժեք իրերը ներկայացնում յեն պետերին:

Միլիցիայի սոցիալական կազմը յեւս զգալիորեն փոփվել ե հաճախակի պատահող նախկին կուլակներին փոխարինեց զլիավորապես չքավոր գյուղացիության յեւ բանվոր-ների զավակները:

Խոշոր չափով բավարարվել ե նաեւ միլիցիայի տնտեսական-պարենային վիճակը: Շնորհիւ հատկործկումի յեւ զավմասերի գործկումների ձեռք առած կտրուկ միջոցների վերջին յերկու ամիսների ընթացքում հիշյալ նպատակի առթիւ տարվել ե զգալի աշ-խատանքներ ստեղծվել ե կազարմային կյանք, զլիավոր միլիցիայի միջոցով զգեստա-վորվել ե միլիցիան. կատարված յեն անհրաժեշտ քանակությամբ ձիաների գնումներ յեւ կարգավորված յեն գոմեր, պատրաստ յեն ձիերի կեր, մատրասներ, թախտեր, թամ-բեր յեւ պլն:

Միլիցիան զինավորված ե մեծ մասամբ 3 զճանի հրացաններով. զինավորումը կա-րելի ե համարել վոչ բավարար:

Միտեմատիկ զինավարժություններ թե զավատում յեւ թե քաղաքում:

Զգացվում ե ընդհանրապես յեւ հատկապես զավատամասերում կարող հրամանա-տարական կազմի պակասություն:

Այս բացը արժանացել ե թե կենտրոնի յեւ թե վարչաբաժնիս ուշադրության յեւ մի-ջոցներ յեն ձեռնարկվում այդ ուղղությամբ:

Դեռ փետրվար ամսին վարչական բաժինը կատարել եր նայեւ հրամանատարա-կան կազմի գտումը:

Նոյն այդ փետրվար ամսում կատարվեց նաեւ վարչական բաժնի նախաձեռնու-թյամբ զավատական յեւ քաղաքային միլիցիաների միացում, վոր կարեւոր եր աշխա-տանքի միակերպության ու կենտրոնացման, ինչպես յեւ միջոցների ինսյոդական տե-սակետից: Յեւ այդ միացման արդյունքը անմիջապես զգալի յեղավ. ստեղծվեց գործնե-ություն համաչափության հնարավորություն, կրճատվեցին բավականաչափ միլիցիոներ-ներ, ինչպես յեւ զբաղենյակային պաշտոնյաներ յեւ պլն:

Միլիցիան չի ունեցել այդ շրջանում նաեւ իր քրեական հետախուզական բաժինը, վորը կազմակերպել ե հուլիս ամսից:

Միլիցիայի արգելարանը ներկայումս համեմատաբար կարգավորված ե անց ե կաց-ված յեւ կտրական լուսավորություն: Բանդարկյալների մի մասը ժողովրդական դատա-բանների հաշվին յեն, վարչական կարգով կալանավորներ քիչ յեն լինում: հաշվետվու-թյան ընթացքում վարչական կարգով բանտարկվածներ են յեղել զանազան ժամկետա-կով 45 հոգի:

Կալանավորներին տված սնունդը պիտի համարել անբավարար, միջոցներ յեն ձեռք առնված կանոնավորելու:

Անհրաժեշտ ե ուժեղացնել հրամանատարական կազմը, ավելացնել միլիցիայի թի-վը շարունակել նրա քաղաքական-քաղաքացիական դաստիարակության գործը, ավելի յեւս ուշադրություն դարձնել նրա տնտեսականի վրա, ինչպես յեւ վարչա-տեխնիկական բարեկարգման, վորից հետոյ միլիցիան ավելի պիտանի կդառնա մեր հատարակա-կարգի հաստատման տեսակետից:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆԸ, տոմարագրում ե քաղաքա-ցիական կացության դրությունները ծնունդ, ամուսնություն, մահ յեւ պլն տալիս ե շա-հագորգված անձանց ու հիմնարկներին պատշաճ արտագրեր, տեղեկանք ու վկայագիծ յեւ միաժամանակ կազմակերպում ու ղեկավարում տեղական յենթաբաժինները:

Առաջնակարգ կարեւորություն ե ներկայացնում այս բաժնի կարեւորությունը թե

արտարտադրության, թե ընդհանուր վարչական գործառնությունների յեվ թե գինավորական կարիքների համար:

Չնայած նրա այս կարեւորութեանը մինչ այժմ այս յենթաբաժինը զանաւում և անկազմակերպ ու անհարակ վիճակում:

Նույնիսկ քաղաքում տուարագրված տվյալները թերի յեն իսկ շրջաններում կանոնավոր աշխատանք չի տարվում, առանձնապէս դա նկատելի և մասաւրմանական շրջաններում:

Համեմատաբար քիչ շատ շրջանների գործ կատարում և յենթաբաժինը սոսկ տեղականը — վկայականներ տալու գործում, այն եւ հատկապէս գինավորական ծառայությունից ազատվելու նկատարումներով:

(Տես տախտակ № 4).

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր № 4.

Յերեվանի Քաղաքացիական ակտերի գրանցումների „Ձադս“ հունվարի 1-ից մինչեւ նոյեմ. 1-ը 1922 թ.

Վ Ո Ր Տ Ե Ղ	Ծնունդ	Մահ	Ամուսնութ.	Ապահարհանի զեպքեր	Ծննդյան վկայական.	Ծննդանի, արձանի, արգիւմի, փաստաթղթեր
Քաղաք	525	406	336	34	5546	5413
Գավառ	828	698	505	26	—	—
ԸՆԴԱՄԵՆԸ	1353	1104	841	60	5546	5413

Այս անմիջիցս կացութեան պատճառները բազմաթիւ յեն.

ա) Քաղաքացիական ակտերի գրանցման գլխավոր, կենտրոնական բաժինը-արժանի յենանդուն պահանջկոտութեան ցույց չի տալիս յեվ չի մասաւարարում տեղերից տվյալներով, մատյաններով, ցուցմանքներով, հրահանգներով յեվ այլն.

Հարցացուցակների համաձայն ինչքան բնակարանային տարածու- թյան կարիք կա	9095 քառ.սոմ.

2. ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Կոմիտեի Տնտեսության բաժնի տեխնիկական ենթարամնի սանիտարական սեկցի-
ան կազմակերպվել է մայիսի 23-ից:

Այս մասի կազմակերպության ղույլերն քաղաքը բառիս բուն իմաստով թաղված եր
աղբակույտների ու կեղտոտությունների մեջ, վորովհետև 6 տարվա ընթացքում քաղաքը
երբեք չէր մաքրվել: Աղբակույտներով լեցուն եին վոչ միայն քաղաքի ծայրամասերը
այլ յեվ նոյն իսկ կենտրոնական փողոցները:

Միջոդիններից շատերը բառացի կերպով փակված եին աղբակույտերով: Զուրը կանգ
եր առնում ճանճանում յեվ այդ փողոցներում ու միջոդիններում ամեն ինչ աղտավորում,
ջուրը վարակվում եր, վորով հատկապես զարկ եր ստանում մալեարիան — չերմախոր:

Բանված ու կիսաքանդ տները քաղաքի նույնիսկ կենտրոններում, վոր ժառանգու-
թյուն եին ստացել հին կառավարություններից վերածվել եին արտաքնոցների յեվ հա-
սարակական արտաքնոցները այնքան եին փչացել-աղբավորվել, վոր նրանցից ոգտվելն
անհնարին եր դարձել:

Սանիտարական մասը իր կազմակերպվելուց անմիջապես հետո, ձեռնամուխ եղավ
քաղաքի կենտրոնեց 3 վերստ շրջապատող աղբակույտներից ու կեղտանքներից մաքրման
գործին: Միաժամանակ այն վայրերը յեվ փված շենքերը, վորոնք վերածված եին աղ-
բանոցների յեվ արտաքնոցների, ներկայումս այդ ամբողջ աղբակույտները սաքրված յեն
յեվ այդ վայրերը կղզիացված յեն ամբողջապես անցորդներից: Այնտեղ, ուր կային փոքր
անցքեր փակված յեն քարի պատնեշներով, իսկ վորտեղ դա անհնարին եր պատնեշված
ե փշա-յերկաթե թեղերով մինչև 2½ արշին բարձրությամբ: Այսպիսով անց ե կացրած
մոտ 100 սոմ. երկաթյա թեղավոր պատնեշ, վորոնց համար ծախսված ե 3 կապոց
փշյա երկաթաթեղ:

Միաժամանակ աղտոտություններ հավաքվում յեն բոլոր փողոցներից փակուղիներից,
միջ-փողոցներից յեվ մաքրվում ու կարգի են բերվում փողոցի խանութները: Մինչև
այժմ քաղաքի մաքրության վրա աշխատել յեն 12.800 բանվոր յեվ 1454 սայլ, վորոն-
ցով դուրս են տարված 15.000 սայլ աղբ: Սանիտարական սեկցիայում քաղաքի մաքր-
ման յեվ վերահիշյալ աշխատանքները տանելու համար ծախսված ե 11.710.000.000 հ.
խ. դ. քացի այդ սանիտարական սեկցիան տեղափոխել ե անպաշտպան հիվանդներին
քաղաքային հիվանդանոցներ 1045 հիվանդ, հիվանդանոցներից ու փողոցներից դուրս ե

հանվել դիպակներ՝ 1337 յեվ փողոցից հավաքվել յեն-զանազան անասունների դե-
յակ 520 հատ:

Ը. ԱՐԴԵՐՈՒՆԱՅԵՐԱԿԱՆ-ՇԱՀԱՆՈՐԾԱԿԱՆ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Արդյունաբերական շահագործական ենթարամնում կենտրոնացած ե բաժնիս քաղա-
նիքների սպանդանոցի, շուկայի յեվ ստացարանների կառավարությունը: Տնտեսական նոր
քաղաքականության շնորհիվ այդ ենթարամնի աշխատանքն ու դիրքը շատ բարձրացավ:
Այս ենթարամնին ե հանդիսանում այն կառուցվածքը, վորի միջոցով Կոմիտեի Տնտե-
սության բաժինը առանձնապես խոշոր դեր ե կատարում ու մեծ մասամբ մասնակցու-
թյուն ունի ժողովրդական տնտեսությունից վերականգման ասպարիզում: Ենթարամնիս ար-
ժեքը ավելի յեվս նկատելի ե դառնում այն որվանից յերբ սկսվում ե կիրառվել Կոմիտե-
նալ Տնտեսության մատակարարած ծառայությունների վճարի սկզբունքը, վորի շնորհիվ
պետությունը շրջանառության լույս ընծայած դրամանիշները կրկին մուծվում, վերադա-
նում յեն պետության դրամաբիլը յեվ ոգտագործվում կրկին նույն նպատակների համար,
այդպիսով կրճատելով պետական եմիսիայի ծայրահեղությունները:

Մեզ մոտ դեռ շատ առաջ քան Ժողովուրդը դա կվավերացներ, կիրառվում եր այդ
սկզբունքը յեվ ամբողջ ժամանակ մենք սպրում եինք մեր հաշվին: Դժդբախտաբար Յե-
րեվանը գուրկ ե գործարանային յեվ արդյունաբերական միջոցներից, իսկ այն աննշան
արդյունաբերական ձեռնարկությունները, վորպիսիները կան մեզում „Արարատ“, կաշ-
վեգործարանները, յեղերտրական կայարանը յեվ այլն գտնվում յեն Ժողովրդական տըն-
տեսության տրամադրության ներքո:

Այսպիսով մեզ բաժին ե ընկնում այնպիսի աննշան ձեռնարկություններ ոգտագոր-
ծել, ինչպես քաղանիքները, սպանդանոցը յեվ այլն, վորոնք Կոմիտեի Տնտեսության
կազմակերպությունից մինչև ուս գտնվում յեն արդյունաբերական շահագործական են-
թարամնի ձեռքում:

1. Բաղնիք. խորհրդային 2-րդ բաղնիքը, նախկին „Փանտագիա“ յեվ վարսավիրա-
նոցը լինելով անձեռնտու անմիջական շահագործման տրված ե կապալով, ինչ վերաբե-
րվում ե մյուս յերկու խորհրդային բաղնիքներին-նրանք վերանորոգվել յեվ գործի յեն
դեվել ու կանոնավոր աշխատում յեն յեվ բավարարում յեն Յերեվանի հասարակությանը
բանի վոր լինում ե վառելանյութ: Բաղանիքներից ոգտվողների թիվը ամսական հա-
սնում ե 7200 հոգու ամեն մի բաղնիքում, սակայն դեռ շատ առաջ Ժողովուրդի վորո-
շմամբ 2-րդ խորհրդային նախկին „Նդեագարյանի“ բաղնիքը վերցրվեց Կոմիտեի Տն-
տեսության բաժնից յեվ ամբողջապես հանձնվեց զինվորական մասերի տրամադրության
սկսած մարտի կեսերից: Շուտով մի առ ժամանակ դադար առավ նաեվ խորհրդային
առաջին բաղնիքը „Նախկին Հովհաննիսյանի“ Երկար անգործությունից հետո նա իսպառ
անպետքացել եր, այնպես վոր բաժինս հարկադրված եր ձեռնարկելու նրա վերանորո-
գությունը: Այդ վերանորոգությունը վերջացված ե յեվ բաղնիքը բավականին բարեկարգ
վեճակի մեջ ե: Մինչև այժմ բաղնիքից եկամուտ ե ստացել 11.231.549.000 ո. հ. խ.
դ. եթե հաշվի առնելու լինենք այն, վոր քաղանիքը երկար ժամանակ չի աշխատել
այդպիսի դեպքում պիտի համարել այդ եկամուտը բավարար յեվ վոչ վնասաբեր:

2. Սպանդանոցը: Սպանդանոցը գտնվում ե ծաղկալ վիճակում, նրա միջոցով հա-
ստատվել ե անասնաբուժական վերահսկողություն քաղաքում: Հաշվետվման շրջանում

սպանդանոցի գործունեությունը հետեվյալ պատկերն է ներկայանում: Հունվարի սեկից մինչև հոկտեմբերի վերջը:
(Տես տախտակ № 8).

Տ Ա Խ Տ Ա Կ № 8

Յերեվանի Կոմունալ-Տնտեսության Սպանդանոցի

Ժ ա մ ա ն ա կ ր	Մղթված է խոշոր եղջերու սալար	Մղթված է վաղխալ	Մղթ. այծ	Մղթ. խոզ	Գանձված գու- մարը
Հունվար	482	1063	146	61	100590000
Փետրվար	330	421	119	—	156070000
Մարտ	295	309	83	4	405890000
Ապրիլ	367	298	61	—	983850000
Մայիս	304	567	160	—	1.790300000
Հունիս	234	914	202	—	3.316100000
Հուլիս	240	1716	269	—	3.357000000
Ոգոստոս	175	2069	207	—	4.470000000
Սեպտեմբեր	186	2469	221	—	4.553000000
Հոկտեմբեր	232	2795	306	—	6.688000000
ԸՆԴԱՄԵՆԸ	2845	12621	1774	55	258821700000

Սպանդանոցը մեզ համար հանդիսանում է խոշոր եկամուտի աղբյուր:

3. Շ ու կ ա. Կոմունալ-Տնտեսության բաժնի խոշոր արդյունաբերական աղբյուրներից մեկն է հանդիսանում շուկան, վորը ունի հետեվյալ եկամուտները:

ա. Շուկայի կրպակներ յեվ տեղեր	21.290.923.000
բ. " մանրավաճառները	14.078.725.000
գ. Կշեռք յեվ հրապարակ-կայան	58.180.062.000
դ. Շուկայի աճուրդ	21.700.000

ընդամենը 94.351.410.000

Բացի այդ ձեռնարկությունները, Կոմունալ-Տնտեսության բաժնին հանձնվեց մի քանի տրված ու փոքր կաշվեգործարան, վորից հրաժարվել եին թե Ժողովուրդին յեվ թե Հայկոսպը: Այդ գործարանը Կոմունալ-Տնտեսությունը կապալով հանձնել է ձեռնարկողներին, վորոնք յեվ վերանորոգել յեն ու ներկայումս արդեն գործի յեն դրել:

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՍ.

Տեղական հարկերի հաստատմամբ, անհրաժեշտություն զգացվեց ունենալ նաեվ հարկային կազմակերպություն:

Հարկային մասը կազմակերպվեց ս. թ. փետրվարի 21-ից, այդ հարկերը վերցվում են փոխադրական միջոցներից յեվ անասուններից, առեվտրա-արդյունաբերական ձեռնարկություններից, չրից, կոշիկ արքողներից յեվ այլն: (Տես տախ. № 9) հետեվեալ երեսը:

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Մատակարարման ենթաբաժինը գնումներ է կատարում Գործկոմի Կոմունալ բաժնի բոլոր ճիւղերի. այլ յեվ փոխադրական միջոցներին ծառայող անասունների համար:

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Կոմունալ-Տնտեսության բաժինը իր կազմակերպության սկզբին իսկառ չունեց փոխադրական սիջոցներ: Հետզհետե գնվեցին սայլեր, երկանիվներ, ծիակառքեր, ծիեր ու եզներ: Ներկայումս ենթաբաժնիս տրամադրության տակ կա 9 սայլ 15 հատ երկանիվ, 4 հատ ծիակառք, 2 հատ թեթեվածեվ կառք, 2 հատ մագուլի տակառ, 4 հատ ախտահանական տակառ, ծի 25 հատ, եզներ 4 գլուխ: Այս տարվա անասունների կերը հարկ եղածին չափ պատրաստված է: Շենքը նորոգության է ենթարկված:

ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ԿՈՒԼԵԳԻԱ

Դավադրողներին կազմված և ոգոստոս ամսին վարչաժամի վարիչի նախագահությամբ, նպատակ ունենալով կարգավորել հողային հարաբերությունները յեվ հողաշինարարական աշխատանքները զավառում:

Խորհրդային իշխանության հողային քաղաքականության հարցում անհրաժեշտ և ջուկել յերկու դրություն—սոցիալ-տնտեսական յեվ տնտեսա-տեխնիկական, այլ կերպով ասած—ընդհանուր հողաբաշխման յեվ գյուղատնտեսության մշակույթի: Մոտենալով խնդրին այսպես—աչքի և ընկնում հողային հարցի սոցիալական դրության առանձնահատկությունը Խ. Հայաստանում:

Մեր յերկրում խոշոր կալվածատիրությունը քայքայում և մատի վրա կարելի և հաշվել կենտ ու ջուխտ մանր նախկին կալվածատերերին:

Հայաստանում սոցիալական տեսակետից հողային հարցը զլխավորապես, յեթե վոչ քայքայապես, ներքին գյուղացիական վերաբաշխման, սահմանային վեճերի, հողացրվածության, հողապահպանության ընույթ և կրել:

Սոցիալական իմաստով—հողաբաշխման մեր քաղաքականությունը դիպչում և գյուղական կուլակների շահերին:

Իսկ այսպիսի մի առանձնահատկություն հողային փոխ-հարաբերությունների, անկասկած, դժվարացնում և հողաբաշխման խնդիրը Հայաստանում, առավել յեվս, վոր գյուղացիական տնտեսության զարգացման ներկա դրությունը ավելի յեվս զգալ և տալիս այն սակավահողությունը, վորը յնդրում և Հայաստանի աշխատավոր գյուղացիության:

Այս առաքելիքում ամեն քայլափոխում առաջ են գալիս նաեվ այլ յերկու կարեվոր ու առանձնահատուկ դժվարություններ:

Դա նախ յեվ առաջ այն և, վոր քացի մշտակյաց ու նստակյաց գյուղացիությունից մեր հանրապետությունը լեցուն և նաեվ սոցիալական անկայուն վիճակում սպրոդ հոծ թվով գաղթականությամբ:

Կլիմայական, տնտեսական, կենցաղային ու քաղաքական այլ պայմաններում անպրած այդ գաղթականությունը իր յերեքուն դրությամբ աններդաշնակություն և մտցնում ու արգելք և դառնում հողաշինարարական ընդհանուր քաղաքականության մեջ:

Յերկրորդ այն, վոր հողաբաշխման ընդհանուր քաղաքականությունը ընդգրկում և նաեվ լքյալ գյուղերը, վորտեղ ժամանակին ընակված և յեղել թուրք աշխատավոր գյուղացիությունը:

Այդ գյուղերից շատերը յեվ լավագույնները մասամբ կամ ամբողջովին ընակված են հայ աշխատավոր գյուղացիությամբ:

Իսկ ազգամիջյան կռիվներից հալածական թուրք գյուղացիությունը մինչ որս ևլ անհատաբար թե հավաքականորեն գալիս և, համաձայն 1921 թվի սեպտեմբերի 28-ի

դեկրետի. այդ գյուղացիությունը ունի նախամեծար իրավունք վերաբերակել իր նայրենի ոջախում:

Այս հողի վրա, թեյով աննկատելի, քայքայված այնպես անխառնակելի են վորոշ տեղերում անտեսական թյուրիմացություններ:

Բացի այս սոցիալ քաղաքական դժվարություններից—հողային քաղաքականությունը, ընդհանուր հողաբաշխման գործը դժվարանում է նաեւ մի շարք տեխնիկական գործնական պատճառներով:

Հիանալի ճշգրիտ վիճակագրական տվյալներ հողի քանակի ու վարակի, չի կատարվել լուրջ գյուղատնտեսական ընդհանուր վիճակագրություն. անհայտ է ազգաբնակչության ուղիղ թիվը, չկան ձեռնարկային հողաչափեր, քայքայված է պահանջվող ֆինանսական, տեխնիկական, փոխադրական յեւ այլ միջոցներ:

Այս պայմանի պայմաններում Հողկուլլեգիան ոգոստոսից ձեռնարկել է հողաշինարարական պատասխանատու աշխատանքներին, պայմաններ վորոնք համարյա թե անաղծարելի էին:

Համաձայն Հողկուլլեգիայի ունեցած ընդհանուր տեղեկությունների Յերեվանի գավառի հողային դրությունը յեւ ազգաբնակչության թիվը հետեւյալ պատկերն է ներկայացնում:

(Տես տախտակ № 10) հետեւյալ երեսը:

Համաձայն գյուղատնտեսական-յերկրաբանական դրության, մեր գավառը բաժանված է հետեւյալ գյուղատնտեսական շերտերի.

1. Այգեգործական-թանգարժեք բույսերի մշակույթի շերտ, վոր ընդգրկում է Հրազդանի, Ղամաբլուի յեւ մասամբ Վ.-Բասարի շրջանները:

2. Հացաբույսերի յեւ բանջարանոցային մշակույթի շերտ, վորի մեջ մանում են Կոտայքի, Բաշ-Գետնիի յեւ մասամբ Վ.-Բասարի շրջանները.

3. Կենդանաբուծական յեւ կաթնատնտեսական մշակույթի շերտ, վորը ընդգրկում է գավառի լեռնային մասերը:

Այսպիսի մոտավոր տվյալներով Հողկուլլեգիան ոգոստոսին կանոնավոր յեւ սխառմատիկ կերպով ձեռնարկեց հողաշինարարական դժվարին աշխատանքները: Այս աշխատանքները կատարելիս մեզ օրինական հիմք ու յեւակետ ծառայում էր Ժողովրդական կոմիտեների Խորհրդի 1921 թ. Սեպտեմբերի 28-ի դեկրետը, վորը հրատարակել էր Հողժողովը:

Հողաշինարարական աշխատանքների ընթացքում յեւ միաժամանակ կատարվում էր ստուգումն անհրաժեշտ վիճակագրական տվյալների:

Գործի նաջողության համար յեւ կամենալով գյուղացիական-աշխատավորական շրջաններին հողորդակից անել կատարվող աշխատանքներին—յւրավիբեցին շրջանային գյուղացիական խորհրդակցություններ, վորոնք շատ օժանդակեցին պարզելու կարիքի յեւ նախադրությունների չափը:

Այս վերաբանված տվյալների համաձայն յեւ կազմվեցին հողաբաշխման ու հողաշինարարության համապատասխան նախագծերը:

Հողժողովի Հողային բաժնի յեւ Գավառագործկոմի Հողբաժնի կատար Ժողովը վորոշեց հողաշինարարական աշխատանքները սկսել Հրազդանի յեւ Ղամաբլուի շրջաններից, սակայն վորովհետեւ այդ շրջաններում գյուղատնտեսական աշխատանքները սկսվել էին, ստիպված եղանք աշխատանքները կենտրոնացնել Կոտայքի յեւ Բաշգյանի շրջաններ:

Տ Ա Խ Տ Ա Կ № 10.
Գավառի հողային յեւ շնչերի տվեալները

Դեմոկրատիկ	ՀԱՐՑԵՐ	Կոտայք	Հրազդան	Գավառ-Վ. Բաշ-Գետնի	Բաշ-Գետնի	Վ. Սեւ-մա	Գավառ	Ծանոթություն
1	Մարդաբնակ գյուղ. քանակը.	37	22	41	25	28	198	225
2	Լեյալ	1	—	12	4	7	27	225
3	Տեղական բնակչ. քանակը.	18542	8156	9443	4876	25371	3)	84039
4	Գաղթականներ բնակել.	3440	3275	4253	830	4000	4)	16864
5	Պետական հողեր քանակը գեո.	19830	7000	15385	8033	13260	5)	80238
6	Անպետական հողեր	10649	3356	18884	16236	18810	6)	75411
7	Արտատեղեր տարածութ. դ.	17000	8000	8500	7340	4000	7)	47840
8	Անտառների տարած. դեո.	—	—	—	10000	9347	8)	19347
9	Ընդ. քաղաքի հողեր տար. շրջ. դ.	30479	10356	38769	24269	37070		93922
								Ընդամ. 244836 դ.
								Գավառի տարածութ. յեր.
								արտատեղեր 47840 դ.
								անտառներ 41347 դ.
								համալ. հողեր . . . 155649 դ.
								Ընդամ. 244836 դ.
								*) այդ քանակից անտառներ
								տակ 11.221 դ.
								խոտաբներ 7.500 դ.
								գավառի ֆոնդը . . . 8.000 դ.

բում, շարունակելով, սակայն հողաշինարարական նախագծերը Հրազդանի շրջանում մի-
աժամանակ վերադառնալ հետեւյալ հողային նորման ըստ գաղմատերի.

Կոտայք— $\frac{3}{4}$ 1, $1\frac{1}{4}$ դեպատին.

Հրազդան— $\frac{1}{2}$ դեպ., Համարքու— $\frac{1}{2}$ դեպ., Վ.-Բասար— $\frac{3}{4}$ — $1,1\frac{1}{4}$ դեպ.

Բաշգյանի— $1,1\frac{1}{4}$ դեպ., Ախտայ— $1,1\frac{1}{4}$ դեպ.

Առ 1-ր նոյեմբերի մոտավորապես կատարվել է հողաշինարարական աշխատանքնե-
րը սահմանային յեվ միջոցային իմաստով 1. Կոտայքի 26 գյուղում, Հրազդանի 13
գյուղում, Համարքում 30 գյուղում, Բ. Վեդիում 16 գյուղում, Ախտայում 13 գյուղում,
Բաշգյանիում 14 գյուղում:

Հողաշինարարության ամբողջ ընթացքում յեվ ամեն մի քայլափոխում՝ զգացվում է
սակավահողություն, բավական է ասել, վոր շնչաբաժին ընկնում է կես դեպատին, վորը
գյուղատնտեսական մշակույթի ներկա պայմաններում, ավելի քան անբավարար է:

Ներքին հողաբաժանությունը, գյուղերի յեվ սահմանների վեճերն ու բարդությունները
վերջացնելու հետո, մեզ համար դարձավ հրամայական յեվ հաշվաճային. այդ աշխա-
տանքը պիտի համարել առանցքը հողաշինարարական աշխատանքի, վորը չնայած իր
անթիվ յեվ անհամար դժվարություններին՝ հնարավոր յեղավ ընտան հողին մեջ գցել
յեվ ընթացք տալ:

Կատարված է ներքին հողաբաժանություն, համաձայն գաղհողորդեզայի զբաղոր հրա-
հանգի յեվ լրացուցիչ շրջաբերականների, մեծ մասամբ շրջանների պատրաստի յեվ մեր
քաղաքականությունը ըմբնող գյուղացու ծոցից դուրս յեկած ընկերների անգնահատելի
ջանքերի, կատարվել է ներքին հողաբաժանություն Յերեվանի 6 գաղառամսերի 93
գյուղերում: Դեռեւս աշխատանքը շարունակվում է մի շարք գյուղերում: առանձին դժ-
գոյություններ չեն նկատվել մասսայական իմաստով: Աշխատանքի ընդհանուր պատկերը
կցվում է զեկուցման № 11 տախտակով հետեւեւալ երեսը:

Ընդհանուր առմամբ այդ կարճ ժամանակաընթացքում 2 յերկրաչափով յեվ մեկ
դեկավար երկրաչափով յեվ մեկ զճագրով հնարավոր է եղել վերջ տալու հնարավորու-
թյան սահմաններում հողացրվածությունը, հողահեռավորությունը, գաղթականություն հողով
բավարարելը: Դեռեւս գաղհողորդեզան ունի մեծ յեվ բարդ տեխնիկական յեվ զճագրա-
կան աշխատանքներ մոտիկ ապագայում:

Տ Ա Խ Տ Ա Կ № 11.
Կատարված հողաշինարարական աշխատանքների

№	Հ Ա Ր Յ Ե Ր	Կոտայք	Հրազդան	Համարքու	Վ.-Բասար	Վեդի	Ս. Սևա	Գուգու	Ծանոթություն
1	Վ. զեզան գյուղում կատարված է հողաշինարարական աշխատանք . . .	26	13	30	16	14	13	114 գյուղ	
2	Կատարված աշխատանքների հոգի առնալու յունը	10,000 դ.	5,000 դ.	7,500 դ.	8,500 դ.	14,000 դ.	10,000 դ.	55,000 դ.	
3	Վ. զեզան գաղթական. են տեղափո- ված	180 անձ	749 անձ	—	4,200 անձ	—	—	5,129 անձ	
4	Վ. զեզան գաղթական. հանել են . . .	—	—	1,300 անձ	—	—	120 անձ	1,420 "	
5	Վ. զեզան գաղթական. պիտի տեղա- փոխվեն	2,000	400	500	5,000	3,000 անձ	—	10,900 "	
6	Քանի գյուղերում կատարված է հեռ. քին հողաբաժան	26	20	29	—	10	8	93 դ.	50—60 գյուղերում շարունակվում է
7	Քանի համայնքներ միացել են . . .	—	—	7	—	2	—	9 դ.	
8	Քանի համայնքներ վերաբեռվալ ու- նեք պատրաստել ծրագրերը միաց- նելու համար	—	—	8	—	2	4	14 համ.	
9	Քանի հողային վեճեր վերջացրված են	13	9	18	1	9	8	58 վեճեր	
10	Վեճեր հողամասեր առանձն- թյուն վերաբ. վերացված են . . .	1,500	1,000 դ.	900 դ.	—	900 դ.	1,400 դ.	5,800 դ.	

Բացի վարելահողերից-քաղաքը ունի նաեւ 64 դեռ. հող, վոր մասնավոր մարդկոնց ե տրված եղել երկարատեւ տիրութեան իրավունքով յեւ այգի ու պարտեզ տնկելու պարտավորութեամբ:

Պատերազմի յեւ հետագայի քաղաքացիական կռիւներից ոգտվելով այգետերերը չեն հատուցանում կանոնավոր կերպով նրացից հասանելի վճարները, վոչ եւ քաղաքն ե միջոցներ ձեռնարկել իր շահերը ու իրավունքները պաշտպանելու:

Այգիների յեւ այգետերերի ցուցակը արդեն պարզված են ու մոտ ապագայում գործնական միջոցներ կձեռնարկվեն որինական կարգով պետական-քաղաքային հասույթները ստանալու:

Բացի այս 64 դ. այգիներից-քաղաքային հողերի վորոշ մասերը գտնվում են գանազան վաշխառուների ձեռքում, վորոնք այդ հողերը դարձրել են անխիղճ շահագործման միջոց:

Բացի այդ, հողերի տերերից վոմանց քաղաքացիութեան շնորհիւ պատահական մարդիկ ապրիւնաբար ցանքներ են կատարել այդ հողերի վրա:

Խիստ միջոցներ են ձեռք առնվել թե բոլոր քաղաքային հողերը հայտնաբերելու յեւ թե երկրի շահերին պատշաճ կերպով ոգտագործել այն:

Սակայն չնայած այս յեւ ապագայի այլ ձեռնարկներին, քայց յեւ այնպես ծայրահեղ սակավաթիւութունը մնում ե աշխատավոր գյուղացիութեան ու մեր առաջ ծառայած:

Գյուղատնտեսական մշակույթի բարձրացումը մաքսիմումի-սա ե լինելու մեր գործունեութեան ղեկավարող գաղափարը ապագայում. առայժմ այդ ուղղութեամբ շատ չնչին աշխատանք ե կատարվել:

Սակայն վաղվան որը, երբ կվերջանա հիմնական հողաքաշխումը յեւ կտեղծվի վորոշ միւնիմում գյուղատնտեսութեան կայունութեան, այն ժամանակ միայն լիակատար նսարավորութուն կտեղծվի ամբողջապես ձեռնամուխ լինել գյուղատնտեսական մշակույթի պատասխանատու գործին:

Դաւով սերմանման նոր կամպանեային-արդեն սկսվել յեւ մինչեւ որս բաժանված ե 31.000 փութ սերմացու:

Ընդհանուր առմամբ հաշվի առնելով մի շարք ոլջեկտիւ պայմանները, Հողբաժինը իր վրա դրած պարտականութիւնները տարել ե հաջողութեամբ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Սոցիալական առողջապահութեան յեւ զիտականութեան հարցը մի նոր ու կարեւորագոյն խնդիր ե, վոր առաջադրել ե Խորհրդային Իշխանութեանը Հայաստանում:

Առողջապահութեան միջոցների գործադրութիւնը գերազանցապես սոցիալական կուլտուրական հարց ե, վորին բավարարութուն տալու համար անհրաժեշտ են այնպիսի նախադրյալներ, վորոնք ամէլի շուտ պայմանավորված յեն Խորհրդային Իշխանութեան ընդհանուր սոցիալական քաղաքականութեան հաջողութեամբ:

Այդ սոցիալական քաղաքականութեան հաջող արդյունքը միայն կարող ե հնարավորութեան ստեղծել արդյունավետ կերպով կազմակերպել նաեւ առողջապահութեան գործը:

Խորհրդային Իշխանութեանից անկախ յեւ անցյալից ժառանգութեան մնացած ուղեկոտիւ պայմանները վոչ մի հարավորութեան չեն կարող տալ նպատակահարմար կերպով առաջադրել ու լուծել այն հարցերը, վորոնց բավարարութեան արհաժեշտութիւնը բաժինս դգում ու գիտակցում ե շատ պարզ:

Առողջապայութեան բաժնի համար այսպիսի պայմաններում ամէլի մեծ պահանջ եր դառնում առանձին թափով կազմակերպել բժշկական—բուժականութեան գործը վորպես անմիջական շոշափելի ու ու հրամայական:

Այս ասպարիզում յեւ մեզից անկախ պատճառները զրկում եյին բաժինս իր գործնականութեանը ծավալել այնպես, ինչպես դա կամենում եյինք, ծրագրել եյինք յեւ միաժամանակ անհրաժեշտ եր:

Բժշկական անձնական կազմ, բուժական —հիվանդանոցային շէնքեր, դեղորայք ու վիրակապութեան պիտույքներ յեւ այլն—այս անհրաժեշտ տվյալները ամեն քայլափութում կաշկանդում, սահմանափակում եյին մեր ծրագրերը յեւ ուղեկոտիւ հնարավորութեանները:

Այդպիսի ծանր պայմաններում առողջապայութեան բաժինը կատարել ե մաքսիմումը վորի փաստական թվական արտահայտութիւն տալուակ № 13 կցված ե հաշվետվութեան հետեւյալ երեսը:

Յերեւանի Քաղաքագործկոմի առողջապահութեան բաժնի հովանավորութեան ներքո գտնվում ե կենտրոնական բուժարանը, վորին կից ե նաեւ բժշկական շուտափոյտ "գնութեան մասը—բավարարում ե բազմապիսի հիվանդների ամեն տեսակի հիվանդութիւնների դեպքում: Այստեղ յեն գալիս քաղաքացի, այլ յեւ գալառների ծայրերից հիվանդներ:

Բուժարանում աշխատում յեն ամեն ճյուղի մասնագետներ—ներքին ու յերկրաչափ, վերաբուժական, վէներական, կանանց, առամնաբուժական, ականջի քթի յեւ կոկորդի:

Տ Ա Խ Տ Ա Կ № 13

Յերեսանի Գալգործկամի Առքածներն ենթակայ բժկա-սանիտարական հիմնարկութ յուններն
անայնն, երթեիկ ստացիոնար հիվանդներն շարժման հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը
1922 թ.

Հիվանդութիւնը ներք անունը	Տ Ն Ա Յ Ի Ն			Ց Ե Բ Թ Ե Վ Ի Կ			Ս Տ Ա Յ Ի Ո Ն Ա Բ			Ա Մ Բ Ո Ղ Զ
	Առաջին անգամ ծնունդը	Երկրորդ անգամ ծնունդը	Ընդամենը	Առաջին անգամ ծնունդը	Երկրորդ անգամ ծնունդը	Ընդամենը	Ընդամենը վաճակ	Առաջին անգամ ծնունդը	Ընդամենը	Տիպիկ, եղբայր, ամուսնացիներ
Կարմրուկ	35	88	123	120	245	365	223	155	20	711
Բուժիչ	8	18	26	6	18	24	—	—	—	50
Գիւտերեւ	5	14	19	—	—	—	—	—	—	19
Ծաղիկ	7	13	20	68	102	170	2	1	1	192
Կապուտ հաղ	15	42	57	153	448	601	12	12	—	670
Դուռ (ինքնուեղեւ)	70	152	222	523	1216	1739	109	90	5	2070
Որովայնի տիֆ	14	29	43	44	74	118	58	29	12	219
Բժալը	6	24	30	33	86	119	42	36	6	191
Վերադարձ տիֆ	31	86	117	100	220	320	90	80	9	527
Անորշ տիֆ	10	16	26	28	61	89	5	5	—	120
Թանձք	41	125	166	381	648	1029	86	83	19	1281
Թուրքա	27	54	81	160	461	621	82	42	24	784
Սեփիլիս I	2	—	2	277	1374	1651	104	78	2	1757
II	2	14	16	375	3551	3886	156	128	—	4058
III	3	—	3	70	403	473	—	—	—	476
Վեներական հիվանդ	10	35	45	1157	6651	7808	79	75	—	7832
Մարտիա	406	589	1085	23596	25691	49287	2334	1895	131	46421
Թորքերի լորրուրում	32	56	88	294	817	1111	323	220	61	1522
Շնչալ. զործար. հիվ.	67	98	165	1556	2055	3611	417	346	10	4193
Սրտի և անոթների	21	21	42	188	514	702	31	22	5	767
Մարտիա զործար.	95	129	224	2821	6354	9175	480	364	102	9879
Սննդի հիվանդութիւն	11	18	29	8479	19096	27575	817	608	—	25921
Սննդի	6	24	30	795	1850	2645	15	13	—	2690
Վերադարձական հիվ.	24	23	47	4026	9126	13152	494	284	24	13693
Կանանց	22	24	46	1626	446	2072	175	144	4	5893
Մաշկ. աղտ.	27	26	53	4204	6527	10721	124	115	5	10908
Քոս	5	6	11	2842	6200	9042	1022	803	—	10075
Ներկային և հոդ.	18	23	41	539	1266	1805	134	109	5	1980
Սուր աղիքային	15	—	15	281	649	930	124	67	43	1066
Մետացած ոչ վարակիչ հիվ.	62	78	140	1911	3241	5152	709	410	82	6001
Վարակիչ հիվ.	13	21	34	229	418	647	202	148	26	883
Ատամների	—	—	—	4480	6956	11436	—	—	—	11436
Ծննդաբերութիւն	263	26	289	464	737	1201	49	36	3	1539
Ծաղիկ հատութիւն	—	—	—	12226	7292	19518	—	—	—	19518
ԸՆԴԱՄԵՆԸ	1463	1872	3335	74052	114753	188805	8498	6398	599	200638

Բուժարանում կարելի է դանել հերթական բժիշկներ շուտափույթ ոգնութ յան կալիք
յեղած դեպքերի համար Շենքը շատ անհարմար է յեվ Գալգործկամը ունի իր սեսա-
կետը սույն խնդրում նոր շենքի վերաբերյալ. վոր մեզնից անկախ պատճառներով հնա-
րավոր չի յեղել տեղափոխելը:

Քաղաքի թաթարական մասում աշխատում յեվ գործում է յերկրորդ բուժարանը
վորը համարյա բացառապես ծառայում է թուրք ազգաբնակիւթ յանը, մի դրութ յուն,
վոր անհրաժեշտութ յուն է, վորովհետեւ թուրքերը զժվարութ յամբ յեն հաճախում
քաղաքի այլ մասերը:

Գալտուի վերաբերմամբ մայիս ամսում տեղի յեն ունեցել հետեւյալ փոփոխու-
թ յունները. Քանաքեռի հիվանդանոցը տեղափոխվել է Ուլուխանլու յեվ այժմ գործում
է այնտեղ, իբրեւ բժշկակայան:

Բժշկակայան է բացել նայել Բեյուկ-Վեդիում. Քանաքեռից վոչ հեռու կարմիր
Խաչի միջոցով Շահր գյուղում բացված է մեկ հիվանդանոց 10 մահճակալից:

Ինչպես քաղաքում, այնպես յեվ դավառում կազմակերպված է յեղել ծաղկահա-
տութ յան գործը համաձայն Աստուղիմի հրահանգած ձևի: Ծաղկահատումն կատարվել է
ամենալայն չափերով, ազգաբնակիւթ յան մեջ, մանկատներում, դպրոցներում, բուժան-
ներում յեվ շրջող բուժակների ոգնութ յամբ թարմ շիջուկից:

Ջերմախտի տարածութ յան պատճառով, մասնավորապես Ղամարլուի յեվ Բոյուք-
Վեդիի գաղթականութ յան մեջ, կազմակերպվել է Երզաշարում 30 մահճակալից հիվան-
դանոց. Գալալույում 20 մահճակալից յեվ բժշկակայան Ջանեթլույում: Շնորհիվ այդ
հիվանդանոցների ջերմախտը 50 տոկոսով վերացել է գաղթականութ յան միջոց:

Սուրածինը բժշկական ոգնութ յուն է ցույց տվել պարբերաբար թե մանկատներին,
դպրոցներին յեվ մասնակցել է իր ներկայացուցիչով փոքրահասակ հանցագործների հան-
ձնախմբում. տուրածինը կազմակերպել է նաեւ արտահանութ յան կամերա, վորը հնա-
րավոր է յեղել բարվոք վիճակի մեջ դնել: Տվել է հետեւյալ արդյունքը (տես
տախտակ № 14) հետեւյալ երեսը:

Բացի տեղական բյուջեից Գործկոմի բաժնիները յեվս ոգտվում են ֆինկոմոմ տրամադրված իրենց համապատասխան կոմիտարիատների վարկերից, որինսակ վաչական բաժնի համար ծախսված ե:

Վարչական բաժնի համար ծախսված ե	n.	75.145.000.000
Առօրյակոմի վարկից Առքամնի համար	"	38.246.000.000
Լուսժողկոմի վարկից Լուսքամնի համար	"	24.218.000.000
Հողժողկոմի	"	9.058.000.000
ընդամենը	n.	146.667.000.000

Համաձայն ֆինկոմի սեպտեմբերի 12-ի գրության կազմված ե 6 ամսյա բյուջե յոկտեմբեր 1922 թ. 31-ը մարտ 1923 թիվ, վորի մուտքի յեվ յեւքի գումարները հաւասար յեն 216, 467 ո. վասկով, ըսյց այդպիսի դեո չի հաստատված, նկատի ոնենալով այն, վոր բյուջեն նորից պետք ե կազմլի մեկ տարվա համար:



ՀԱՅՎԱՔԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվե-ֆինանսական բաժինը, ինչպես Գործկոմի կենտրոնական ֆինբաժինը կատարում ե դրամական խոշոր գործողություն: Հաշվապահությունը դրված ն ըսվ հիմքերի վրա յեվ տարվում ե կրկնակի ծտալական սխտեմով: Կառնվարում ե բաժնի վարիչը վորը յեվ գլխավոր հաշվապահ ե կա յեվ 1 հաշվապահ, 1 հաշվետապ, 1 մատենավար, 1 գրագրոնի, 1 անձնապահ յեվ 3 համրիչներ:

Մուտքերը յեվ յեւքերը կատարվում են համաձայն բյուջեների վորոնք կազմված են հունվար-հունիս յեվ հուլիս-սեպտեմբեր ամիսների համար: Առաջինի մուտքի յեվ յեւքի գումարները հավասար եյին 194.000 մինչ պատերազմյան ոտքլով. իսկ յեւքկրորդի 196.253.679.000 ո. հ. իս. դ.: Հունվարի մեկից մինչեվի նոյեմբերի 1-ը յեղել ե մուտքեր:

Նալոգներ	n.	95.819.000.000
Դանձումներ	"	54.427.000.000
Մուտքեր քաղաքային կայքերից յեվ յողամասերից	"	16.738.000.000
Մուտքեր համայնական ծեռնարկություններից	"	43.316.000.000
Մուտք վաճառված հացահատիկներից	"	10.690.000.000
Զանազան մուտքեր	"	9.575.000.000
ընդամենը	n.	230.565.000.000

Այս գումարից ծախսված ե.

Ընհանուր վարչական բաժնի համար	n.	26.107.500.000
Կոմմունալ տնտեսություն	"	144.383.000.000
Առքամնի	"	17.768.000.000
Լուսքամնի	"	14.118.000.000
Հողքամնի	"	4.306.000.000
Շեֆություն	"	10.842.000.000
Չհախտեսնված ծախքեր	"	12.430.000.000
ընդամենը	n.	229.954.500.000

Բյուջեների խոշոր մուտքերը կազմում են.---

1. Պետական ընդհանուր տուրքերից հատկացվելիք գումարները, որինսակ առաջին բյուջեները նախատեսված ե 50.000 ը. մինչ պատերազմ. կուրսով:

2. Դպրոցական-հիվանդանոցային-սանիտարական տուրքերը, առաջին բյուջեով նախատեսված ե 55.000. մինչ պատերազմյան ոտքլով. իսկ յեւքկրորդով 60.000.000.000 հ. դ., այլ գումարների դիմաց միայն ոգոստոսից սկսած մինչ յոկտեմբերի 1-ը ֆինկոմից մեծ դժվարությամբ ստացված ե 9.500.000.000 ո. ցորենի որլիզացիաներով յեվ 18.000.000.000 ոտքլի կանխիկ դրամով, ընդամենը 27.500 միլոն վորը նասեմատած վերեվում ցոյց տված գումարներին վերջինս շատ չնչին գումար ե կազմում:

Գ Ա Վ Պ Ա Ր Կ Ո Մ

Յերեվանի Գաղաուային Պարենափորման Կոմիտեն Հի նանդիսացել Գաղափործկոմիս մի բաժինը, վորը որգանապես կապված շիներ նրան, այդ կապը Յերեվան և յեկել մի- այն նրա գաղմասերում տարած աշխատանքների ժամանակ: գաղմասերում նրա Փուն- կցիաները յեղել յեն հետեվյալները.

1. Գաղաուամասերի պաշտոնեություն վարձադրուծյուն միջերըները հասնելն ու բա- ժանելը.

2. Պարենատուրքի գանձումը, վորը ամենազխափորն ե:

Միջերըների բաշխումը կատարվել ե հետեվյալ ձեովով.

Հունվար . . .	388	հոգու.
Փետրվար . . .	388	"
Մարտ . . .	498	"
Ապրիլ . . .	464	"
Մայիս . . .	361	"
Հունիս . . .	380	"
Հուլիս . . .	191	"
Ոգոստոս . . .	295	"
Սեպտեմբեր . . .	277	"
Հոկտեմբեր . . .	260	"

Գումար 3502 հոգու.

Հնդանրապես ամեն ամիս միջերըները ուղարկվել յեն կանոնափոր. յերբեմն ուղացնելու պատճառով յեղել յեն բողոքներ, սակայն պատճառը եղել և սլծերըների ուշ ստանալը:

Յերկրորդ գլխավով Փունկցիան, վորը հենց պետական տեսակետից առաջնա- կարգ խնդիր ե հանդիսանում--դա պարենատուրքի գանձումն ե: Թողնելով այդ մասին պատշաճ որգաններին խոսելու, մենք այստեղ բերում յենք միայն տախտակը ներկա տարվա գանձված պարենատուրքի:

(Ցես տախտակ № 15).

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր № 15
Յերեվանի գաղաուի գաղազամասերը մտած պարենատուրքի, ըստ ստացած բյուլետենների
առ 10-ն նոյեմբերի, 1923 թ.

Մթերքները անունները	Մթերքի գնահատու- թյունը ամեն մե փթե	Ցերեկան	Կոտայք		Հրազդան		Ղամաղուռ		Վ. Բաթար		Ն. Երևան		Երասխի մոլորակի մոլորակի		Ծանոթություն 1. Եր. գաղաուամ պարեն- ատուրքի գանձման յաջողու- թյան տեսակետից գումար- անքը բաժանվում են հի- տեկալ ձևով-- 1. Բաշ-գուման . . . 94% 2. Կոտայք . . . 71% 3. Հրազդան . . . 70% 4. Ղամաղուռ . . . 67% 5. Ն. Երևան . . . 61% 6. Երևան քաղ. . . 59% 7. Վ. Երևան-քաղ. . . 50% Բնագործից եր. գաղաուամ համարված և պարենատուրք 79%-ը սրբված չափը.
			8 նոյ.	Փ.	8 նոյ.	Փ.	6 նոյ.	Փ.	28 հոկտ.	Փ.	6 նոյեմ.	Փ.	28 հոկտ.	Փ.	
Հացի փրկա- ուղիներ . . .	1	1268	48	13	62	20	2679	08	1178	29	35	12	1414	07	
Ցորեն . . .	1	1160	9662	13	10610	36	6495	28	1770	38	42298	32	39800	06	
Գարե . . .	1	1669	12881	30	5708	02	32	34	—	—	22640	32	54166	17	
Բաժան . . .	50	—	11 1/2	43/4	—	01	—	—	—	—	543	—	573	—	
Ցուգ . . .	50	—	148	16	1	37	4	10	34	05	457	14	769	03	
Արեղ . . .	12	—	2	17	17	09	—	—	49	—	8	13	12	39	
Կարկեն . . .	40	—	22	15	149	35	19	30	—	—	656	18	221	10	
Մեղ . . .	80	—	715	38	7	20	9	20	—	—	—	—	1645	27	
Լոլի . . .	80	—	161	03	4227	—	—	—	—	—	—	—	178	—	
Զալմուկ . . .	50	—	48	09	—	—	—	—	—	—	—	—	4227	—	
Կարկեն . . .	25	—	—	—	—	—	—	—	—	—	5	34	54	03	
Հաճար (սոսի) . . .	90	—	—	—	—	—	—	—	—	—	7	13	7	13	
Եղևազարդ . . .	50	—	—	—	—	—	—	—	—	—	20	14	20	14	
Խաղող . . .	40	1528	—	—	—	—	34000	—	—	—	493	18	35528	35	
Խաղող . . .	15	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	493	18	
Արեղ . . .	90	—	—	—	—	24	3	07	—	—	—	—	27	17	
Կարկեն . . .	80	—	—	—	—	—	—	—	—	—	128	20	128	20	
Գումար փութ- կացուցանել	—	4390	23390	89	17724	72	23235	33	3024	83	38305	40	57117275	90	
Երևանի պաշտոն և միջավայր	—	4390	23129	89	16219	35	9952	—	—	—	23925	50	5084336	40	
Մասն. և գաղա- ուղի պաշտոնե- րում	—	—	—	—	1505	37	16308	—	—	16	12379	90	0732949	50	

Մասն. 2.
Սոյն տեղեկագրի մեջ չեն
մտնում: 1) Երևանի և Երա-
զդանի և Կոտայքի շրջա-
նների գյուղերից համա-
գումար պարենատուրքի տեղ-
եկությունները: —
8000—10000 փութ:

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գաղթականությունը, փորպես յերեկույթ, լինելով մի խոշոր շարիք մեր յերկրի համար—իր գոյությունը շարունակում է պահել. չնայած, փոր ողբա դեմ մղվել է յեվ ներկայումս ել մղում կռիվ յե փորը խլում է ահագին եներգիա:

Անցյալ հորձանիչ պատերազմների աշխատավոր գյուղացիությունը հասցրած խոցերը դժվարությամբ յեն բուժվում: Հեռավոր վայրերում ցիր ու ցան յեղած գյուղացիությունը նեղճետե վերադառնում է իր ոջախը «գաղթականի» անունով, յեվ մեր մի քանի գավմասերում թափված յենք տեսնում հարյուրավոր յեվ հազարավոր այդպիսի քայքայվածներ, փորոնց վերահաստատելու ու փոքրի կանգնեցնելու համար պահանջվում յեն հսկայական միջոցներ:

Մեր Յերեվանի գավառում գաղթականները յերկու կարգի յեն. 1) վերաբնակիչներ, այսինքն ազգամիջյան կռիվներից հայածական յեվ այժմ վերադարձողները, 2) գաղթականներ դրսից, գլխավորապես Պարսկաստանից յեվ Միջագետքից: Վերջինից անցյալ զարնանը գաղթածների ու Ղամարլուի շրջանում հաստատվածների թիվը մոտ 7.000, փորոնց մեծագույն մասը ծրագրված է տեղափոխել Վեդիքասարի շրջանը, ուր կան ազատ հողեր: Իսկ պարսկաստանից գանազան ժամանակներում եկածները՝ Սալմաստից, Ուրմիայից, Սամայից Խոյից, Թավրիզից յեվ այլն—թվով մոտ 3000, քանի ամիս է նույնիսկ չեն ել հաստատված յեվ ծրագրված է ու կիրառվում է նրանց մի մասը յեվս Վեդիքասարի շրջանը տեղափոխել յեվ բնակեցնել—նկատի անելով Ղամարլուի շրջանի նորաստեղծությունը:

Այս բոլոր գաղթականության համար—միաժամանակ գործում յեն Ն. Գ. Ժ. Կ.-ի եվակ Քաժինը յեվ Գավգործկոմը: Մինչեվ ձմեռ փոխադրված կլինեն յիշյալ շրջանը յեվ հաստատված մոտ 7000 շունչ: Արդեն իսկ տեղի փրա, շրջանի գյուղացիության ոգևորությամբ վերանորոգվում են ու պատրաստվում նրանց բնակության համար տներ:

ԳԱՎԶԻՆԿՈՄԱՏ

Ներկայումս գավգինկոմասը աշխատում է հետեվյալ բաժիններով—ընդհանուր գրասենյակ, մոբիլիզացիոն բաժին, տեղափոխության պունկտ, Գավգասկոմ իր 13. շրջաններով: Վերջերս շրջաններու հաշվետվման յեվ դասալքության դեմ պայքարող աշխատանքները կատարում յեն շրջգործկոմները, Գավգինկոմատի ներկայացուցիչի, իբր տեխնիկական աշխատավորի, մասնակցությամբ:

Յերեվանի գավգինկոմասը կատարում է իր աշխատանքները, եջմիածնի, Դարալազյազի յեվ մասամբ Ջանգեզուր գավառների մասշտաբով: Հատուկ ուշադրություն է դարձվում հաշվետվման աշխատանքների կանոնավորմանը յեվ շնորհիվ դրան յիշյալ գավառների բնակչության 60 տոկոսը հաշվի է առնված: Հաշվետվման գրքույկների յեվ գանազան այլ գրասենյակային պետույքների բացակայելը ազդում է գինկոմատի նորմալ աշխատանքների փրա յեվ արգելք է հանդիսանում լրիվ հաշվետվման:

Բնակչության մեծագույն մասը հաշվի առնելու հնարավորություն չէ լինում գյուղ-խորհուրդների կանոնավոր գրքեր յեվ բնակչության մասին պատրաստի յեվ եզրիտ տվյալներ չունենալու պատճառով: Այդ հանգամանքը նկատի է առնվել գինկոմատի կորրիդակցության մեջ յեվ մոտ ապագայում կվերացվեն այդ թերությունները: Դասալքության դեմ պայքարելու աշխատանքները, շնորհիվ ձեռք առած միջոցների, կանոնավորված է, սակայն դիվիզիայի շտաբի փորոշմամբ գավգասկոմը ուղական 30 պատվիրից ավել ընդունել չի կարող. այդ յեվս աշխատանքների ընթացքը կսահեցնում է:

Շրջգործկոմների յիշյալ պարտականությունները սկզբում կատարում էին հատուկ գինկոմատի բաժինները, փորոնք ներկայումս կրճատված են:

Գավգինկոմատի վերջին ամիսների գործունեությունը կարելի է համարել բավարար:



2013

<< Ազգային գրադարան



1536 NL0048546

